

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ՀՀ ՀԱՆԷՊԻ ՀԻՊՈՏՈՍՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ-ՀԻՊՈՏՈՍԻՆ

Հինգշաբթի, 22 Փետրուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, պատուիրակութեամբ այցելեց տուաւ ՀՀ Յալէայի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական-Հիւպատոս մեծարգոյ Բաբգէն Պատալեանին, Հիւպատոսարանէն ներս: Պատուիրակութեան մաս կը կազմէին ճեզիրի Առաջնորդական Փոխանորդ Յոգշ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան, Առաջնորդի Օգնական Յոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Յոգշ. Տ. Արմէն Արդ. Գալաճեան, Ազգ. Վարչութեան ատենապետ մեթր Սուսայուլ Սուսայուլեան, Ազգ. Վարչութեան անդամներ երկրչի. Յարութ Աւրնեան եւ տիար Արմէն Գասպար:



Ազգ. Վարչութեան ատենապետ մեթր Սուսայուլ Սուսայուլեան, Ազգ. Վարչութեան անդամներ երկրչի. Յարութ Աւրնեան եւ տիար Արմէն Գասպար:

Շար. էջ 12 >

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ ՀՀ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ



Հինգշաբթի, 22 Փետրուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, պատուիրակութեամբ այցելեց ՀՀ Մարդասիրական Առաքելութեան խումբի անդամներուն, իրենց կեդրոնէն ներս, ուր շեքմապետ դիմաւորուեցաւ ՀՀ Մարդասիրական Առաքելութեան խումբի հրամանատար գնդապետ Արկատի Տոնոյեանին եւ ՀՀ Մարդասիրական Առաքելութեան ատենապետ Արկատի Տոնոյեանին:

Շար. էջ 12 >

ՃԵՉԻՐԻ ԴԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՐ



Շաբաթ, 24 Փետրուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան ընդունեց ճեզիրի Առաջնորդական Փոխանորդ Յոգշ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանը, Գամիշլիի ազգային երեսփոխան բժշկ. Անդրանիկ Սարգիսեանը, Հասիչի ազգա-

Շար. էջ 12 >

ՀԱՊՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 174-ՐԴ ՆԻՍՏԻՆ

Նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Ուրբաթ, 23 Փետրուար 2024-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս գումարուեցաւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի 174-րդ նիստը:



Նիստին ներկայ գտնուեցան Թեմի ազգային երեսփոխանները, Առաջնորդի օգնական Յոգշնորհ Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Յոգշ. Տ. Արմէն Արդ. Գալաճեան, սրբազան հօր հրաւերով հիւրաբար ժամանած ճեզիրի Առաջնորդական Փոխանորդ Յոգշնորհ Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան եւ Զեսապի Յոգեւոր Տեսուչ Յոգշնորհ Տ. Եսայի Արդ. Եօրտեքեան, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան եւ Ազգային Կրօնական Ժողովի շրջանաւարտ կազմերը եւ հիւրաբար ժամանած ազգային խորհուրդներու եւ թաղական խորհուրդներու ատենապետները:

Նիստը յատկացուած էր թեմի շրջանաւարտ Գործադիր Իշխանութեան գոյգ կազմերուն՝ Ազգային Կրօնական Ժողովի եւ Ազգային Վարչութեան գործունէութեան երկամեայ (2022-2024) տեղեկագրերու ընթերցման, քննարկման, արժեւորման եւ նոր կազմերու ընտրութեան:

Առաջնորդ սրբազան հայրը «Տերունական Աղօթք»-ը եւ «Զգործս Ձե-

ԴԻԱՆ
 ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ
 ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
 Շար. էջ 12 >

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵՍԱՊԻ ՈՒ ԱՌԱՔԵՐՈՅ ԴԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, 24 Փետրուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. Առաջնորդարանի իր գրասենեակէն ներս ընդունեց այցելութիւնը Զեսապի Յոգեւոր տեսուչ Յոգշ. Տ. Եսայի Արդ. Եօրտեքեանի, Զեսապի ազգային երեսփոխան Նշան Լևոնեանի, Լաթաքիոյ Յարաբերական Յանձնախումբի անդամ Յարութ Գաբրիել:



Շար. էջ 12 >

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՍՈՒՐԻԱՆ ԴԱՇՏ՝ ՈՒՇԵՐՈՒ ԲԱԽՈՒՄԻՆ

Կազգայի պատերազմին տարածքը ընդլայնելու հեռանկարը երեւելի էր, անոր արձագանգին Սուրիա եւ Լիբանան հասնելու հաւանականութիւնը առկայ էր մարտերու սկիզբէն իսկ:

Կազգայի պատերազմին բռնկումով տարածաշրջանի ուժերու բախումը իր առաւելագոյն սրումին հասաւ:

Իսրայէլ սկսաւ հրթիռակոծել Սուրիոյ օդակայանները առաջին իսկ օրէն, ապա նաեւ հարաւի սահմանային եւ մայրաքաղաքի կարգ մը շրջաններ, իսկ վերջին երկու ամիսներուն բուռն կերպով կը հարուածէ Լիբանանի հարաւային շրջանները: ԱՄՆ ուժեր միւս կողմէ սկսան հարուածել Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանները, Սուրիա-Իրաք սահմանը, միեւնոյն ատեն Սուրիոյ քարիւղը շահագործել ապօրինաբար՝ իրենց ենթակայ ուժեր օգտագործելով: Այս բոլորը Սուրիոյ մէջ գործող ուժերուն ուղերձներ յղելու փորձեր էին մէկ կողմէ, միւս կողմէ Իսրայէլի անել կացութեան մատուցող ցոյց կու տային: Իսրայէլեան ուժերու գերադաս ըլլալու հանգամանքը ի թերեւ էլած էր Կազգայի պատերազմին բռնկումով, որուն դիմաց Իսրայէլ ջանաց ու կը ջանայ դիմադրութեան նեցուկ կանգնող բոլոր երկիրներն ու անոնց աշխարհագրական լծակները թիրախ դարձնել, արգիլելու դիմադրութեան զինումն ու աճող հակահարուածները:

Սուրիոյ եւ Լիբանանի մօտեցումները բաւական հաւասարակշռուած են ու հեռու բախումներու մէջ ներքաշուելու ծուղակներէն:

Սուրիա, յատկապէս այս օրերուն, ամէն առիթ կ'օգտագործէ իր հողերուն վրայ գտնուող ապօրինի ուժերու օրինազանցութիւնները լուսարձակի տակ բերելու եւ տնտեսական պատժամիջոցներու վերացումը ազդու պայմանի վերածելու, որով հետեւ սուրիական տագնապի տասը տարիներուն ընթացքին այս պատիժները այլազան պատրուակներով պարտադրուեցան, իսկ հիմա քաղաքական ուժերու մրցավազքը Սուրիոյ մէջ առիթ է Սուրիոյ խաղաթուղիները ուժգնօրէն օգտագործելու եւ հետագայ օրերուն երկրի տնտեսական ու ապահովական վիճակի բարելաւման տանող համաձայնութիւններ պարտադրելու:

ԱՄՆ-ի պատժամիջոցներուն կողքին Սուրիոյ տարածքներ գրաւող թրքական ուժեր Ռուսիոյ միջամտութեամբ դուրս գալու նշաններ ցոյց կրնան տալ, եթէ Ուքրանիոյ պատերազմի գէթ զինուորական հաւասարակշռութիւնը ի նպաստ Ռուսիոյ աւարտի:

Վերջին շաբաթներուն նկատելի էր նաեւ սուրիական բանակի միաւորներուն յառաջխաղացքը Իտլիպի արուարձաններուն մէջ, ինչ որ, Կազգայի պատերազմին մէջ ազդեցութիւն ունեցող ուժերու առաջնահերթութիւններու փոփոխութեան լոյսին տակ, թրքական հովանաւորութիւնը վայելող զինեալ խմբաւորումներու ետ մղման յստակ քայլերու մասին կը խօսի:

Պաղեստին-Իսրայէլ զինադադարի, ինչպէս նաեւ համաձայնութիւններու գոյացման պարագային, սուրիական տագնապի լուծման եզրեր նաեւ երեւելի կրնան դառնալ, նկատի ունենալով Սուրիոյ դաշնակիցներուն հաստատական կեցուածքն ու արաբական երկիրներու հետ Սուրիոյ յարաբերութիւններու բարելաւումը, ինչ որ միջնորդներու օրակարգին վրայ կրնայ պահել նաեւ Սուրիոյ տագնապի լուծման օրակարգը, որպէս տարածաշրջանային հարցերու լուծման մէկ հանգոյց:

«Գ.»


-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հանդիպում ունեցաւ Ռուսական երիտասարդական Պահակագունդի Շարժումին եւ Սուրիացի Ռուսանողներու Ազգային Միութեան կազմակերպած ռուս-սուրիացի երիտասարդներու բանակումի մասնակիցներուն հետ:



Նախագահը երիտասարդներուն ուղղած իր խօսքին մէջ ըսաւ. «Սուրիոյ եւ Ռուսիոյ յարաբերութիւնը լրկ քաղաքականութեամբ, տնտեսութեամբ կամ զինուորական գործակցութեամբ սահմանափակուած չէ, այլ եւ հասած է ընկերային ու ժողովրդական մակարդակներու գործակցութեան՝ հիմնուելով երիտասարդութեան ներուժին վրայ, որովհետեւ երիտասարդութեամբ ապագան կը կերտուի, ու երկու երկիրներու յարաբերութիւնը սորոքականութիւնն է պատկեր կը գգենու»:

Նախագահը կեդրոնացաւ երկու երկիրներու միացեալ ճիգերուն վրայ, ըսելով. «Մենք եւ դուք կը մնանք կառչած մեր սկզբունքներուն եւ արժանապատուութեան: Ներկայիս կը դիմադրենք նոյն թշնամիները եւ նոյն ապատեղեկատուութիւնը: Ուքրանիոյ մէջ սորոքակցութեամբ քաղաքացիներու վրայ կը յարձակին՝ Ռուսիան կ'ամբաստանուի, նոյն պատկերը տեղի կ'ունենայ Սուրիոյ մէջ»: Այս առիթով նախագահը ակցուց. «Եթէ նախագահ Փութին որոշում չառնէր Սուրիոյ մէջ ահաբեկչութեան դէմ պատերազմելու, Ռուսիոյ մէջ ահաբեկչութեան տարողութիւնը պիտի ընդլայնէր: Շատեր կը հարցնեն նախագահ Փութինին, թէ ինչո՞ւ Սուրիա պատերազմական օդանւեր կ'ուղարկէ: Պատասխանը յստակ է. Ռուսիա այս քայլով նախ ի՞ր երկիրն ու ժողովուրդը կը պաշտպանէ»:

-ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի Սուրիոյ քաղաքական եւ մարդկային իրավիճակին սուրիւած նիստին, ՄԱԿ-ի մէջ Ալճերիոյ մնայուն ներկայացուցիչ Ամմար պըն Ճամեհ, Անվտանգութեան Խորհուրդին մէջ ափ-



րիկեան պետութիւններուն անունով իր արտասանած խօսքին մէջ Ալճերիոյ մտահոգութիւնը յայտնեց Սուրիոյ մարդկային եւ ապահովական իրավիճակին վատթարացման շուրջ, շեշտելով, որ Սուրիոյ տագնապի լուծումին կարելի է հասնիլ միայն քաղաքական միջոցներով:

Ան շեշտեց, որ Սուրիան ցնցած երկրաշարժէն 1 տարի ետք, մարդկային իրավիճակը օր ըստ օրէ ակնհայտ էր բարդ կը դառնայ՝ տնտեսական տագնապին եւ տնտեսական միակողմանի պատժամիջոցներուն հետեւանքով:

Պըն Ճամեհ եզրափակելով ըսաւ, որ պետք չէ մոռնանք Սուրիոյ աշխարհաքաղաքական կարեւոր դիրքը, ակնցնելով, որ ներկայ պայմանները կը պահանջեն տագնապի հետեւանքները կարգաւորելու փոխարէն անոր արմատական լուծումը գտնել, որովհետեւ Սուրիոյ ժողովուրդը արժանի է խաղաղութեան պայմաններու մէջ բարգաւաճ կեանք ապրելու:

-Սեւտական Արաբիոյ մէջ Սուրիոյ Զանրապետութեան դեսպան դոկտ. Այման Սուսան Սեւտական Շուրայի խորհուրդի նախագահ դոկտ. Ապտալա պըն Մուհամմետ ալ-Շէյխի հետ խորհրդակցեցաւ երկու երկիրներու յարաբերութեան զարգացման շուրջ:



Ռիատի մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին կողմերը քննարկեցին երկու երկիրներու պատմական յարաբերութիւնները: Դոկտ. ալ-Շէյխ գոհուսահովութիւն յայտնեց Սուրիոյ եւ Սեւտական Արաբիոյ յարաբերութիւններու վերականգնումին համար, շեշտելով Սուրիոյ Խորհրդարանի եւ Սեւտական Շուրայի գործակցութեան ամրապնդման կարեւորութիւնը:

Լուրեր Հայաշխարհին

ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԳԱՅՆԱԿԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԲԱՆԱՉԵԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՐՅՈՎ

ՀՀԴ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական գրասենեակը կը հաղորդէ, որ 24-25 Փետրուարին Մատրիտի մէջ տեղի ունեցաւ Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդի նիստը, Սպանիոյ Ընկերվարական կշխատաւորական կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ:



Շուրջ հարիւր երկիրներէ քաղաքական կուսակցութիւններ համախմբող մոլորակի մեծագոյն քաղաքական այս կազմակերպութեան ՀՀ Դաշնակցութիւնը կ'անդամակցի 1907 թուականէն, ՀՀԴ Բիւրոյի նախկին անդամ, ՀՀԴ Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդի անդամ Մարիո Նալպաստեան Ընկերվար միջազգայնականի փոխնախագահներէն է, որ մասնակցած է խորհուրդի եւ նախագահութեան նիստերուն, եւ ընտրուած է ելեւմտական ու կազմակերպական հարցերու յանձնախումբի անդամ:

Ընկերվար Միջազգայնականի նախագահ, Սպանիոյ վարչապետ Փետրո Սանչես կազմակերպութեան նախագահութեան եւ խորհուրդի նիստերու իր բացման ելոյթներուն մէջ ակնարկած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին:

Ընկերվար Միջազգայնականի նախագահութեան եւ խորհուրդի նիստերուն, Մարիո Նալպաստեանը ներկայացուցած է Ատրպէյճանի ցեղասպանական քայլերով Արցախի ցեղային գտման հետեւանքով ստեղծուած իրավիճակն ու մարտահրաւերները, ինչպէս նաեւ Ատրպէյճանի կողմէ Հայաստանի Հանրապետութեան ուղղուած բռնութեան քայլերը, սպառնալիքներն ու պահանջները:

Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդը որդեգրած է Արցախի հարցով բանաձեւ մը, որուն մէջ կը նշուի.

«Ընկերվար Միջազգայնականը կ'աջակցի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւններուն՝ ուղղուած խաղաղութեան համաձայնագրի ստորագրման: Շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման նպատակով համար նման համաձայնութիւն պէտք է ձեռք բերուի առանց ուժի կամ անոր սպառնալիքի կիրարկման՝ հիմնուած միջազգային իրաւունքի եւ դիւանագիտական փորձառութեան վրայ, ներառեալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական քաղաքական կարգաւորման ուղղուած միջազգայնորէն հովանաւորող խաղաղ գործընթացը եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի հիմնախնդրի իրաւունքներու եւ անվտանգութեան լիարժէք իրականացումը իր պայմանական տարածքին մէջ:

Համաձայն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի եւ Հայաստան-

նի ու Ատրպէյճանի միջեւ հակամարտութեան վերաբերեալ մեր երկարամեայ սկզբունքային քաղաքականութեան, ինչպէս նաեւ հաշուի առնելով Արդարադատութեան Միջազգային Դատարանի 17 Նոյեմբեր 2023-ի որոշումը ժամանակաւոր միջոցներ կիրարկելու վերաբերեալ, որ Ատրպէյճանը կը պարտաւորեցնէ «ապահովել այն անձերուն վերադարձը, որոնք լքած են Լեռնային Ղարաբաղը 19 Սեպտեմբերի 2023-էն ետք եւ ցանկութիւն ունին վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, կորուսան այդ ընել անվտանգ, անխոչընդոտ եւ արագ», ինչպէս նաեւ հրաժարի «որեւէ գործողութեան, որ ուղղակիորէն կամ անուղղակիորէն ուղղուած է հայերուն Լեռնային Ղարաբաղէն տեղահանելուն», մենք կ'ընդունենք»:

-Մինչեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերջնական քաղաքական կարգաւորումը եւ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու լիարժէք իրականացումը՝ ապահովել ժողովուրդի հաւաքական, անկաշկանդ եւ անվտանգ վերադարձը հայրենիք: Նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի համար միջազգային կանոններով երաշխաւորուած միջանկեալ կարգավիճակ ապահովել՝ երաշխաւորելով քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու ամբողջ ծաւալը, տրամադրելով Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի անվտանգութեան արդիւնաւետ երաշխիքներ, ինչպէս նաեւ Հայաստանի հետ անխոչընդոտ ցամաքային կապ:

-Ազատ արձակել ռազմագերիները եւ կայանաւորուած անձերը:

-Շրջանին մէջ փոխադրութեան եւ կապի այլ միջոցները ապաշրջափակել ամբողջական կերպով եւ համաժամանակեայ՝ առանց ինքնիշխանութեան որեւէ սահմանափակման:

-Ընկերվար Միջազգայնականը պատրաստ է աջակցելու այդ գործընթացներուն իբրեւ միջնորդ՝ իր միջոցով եւ իր անդամ կուսակցութիւններուն ու կազմակերպութիւններուն մասնակցութեամբ»:

ԹԵՃՐՈՅՑ՝ ՓԱՆԻՆԵԱՆԻ ԵՒ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՄԻՋԵՒ

ՀՀԴ Փարիզի գրասենեակը կը հաղորդէ, որ Չորեքշաբթի, 21 Փետրուարին Ֆրանսայի պառլեմնին մէջ Միսաք Մանուշեանի եւ անոր կնոջ վերայուղարկաւորութեան առիթով Նիկոլ Փաշինեանի Ֆրանսային մէջ գլուխուելու հանգամանքէն օգտուելով, Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Էմանուէլ Մաքրոն նախաձեռնած է Նիկոլ Փաշինեանի եւ Ֆրանսահայ կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահներ Մուրատ Փափագեանի եւ Արա Թորանեանի հանդիպման:

Չրոյցը տեղի ունեցած է նախագահ Էմանուէլ Մաքրոնի ներկայութեամբ՝ Էլիզեթ պալատին մէջ կազմակերպուած ընթրիքի աւարտին:

Նախագահ Մաքրոն բացած է Չրոյցը՝ յստակացնելով Հայաստանի վարչապետի եւ Ֆրանսայի հայ համայնքի ներկայացուցիչներու շփումներու անհրաժեշտութիւնը, եթէ նոյնիսկ տարակարծութիւնները կրնան բաժնել զանոնք: Նախագահ Մաքրոն բարձր գնահատած է Մուրատ Փափագեանի եւ Արա Թորանեանի ի նպաստ Հայաստանի կատարած աշխատանքը: Ան շեշտած է Հայաստանը պաշտպանելու անոնց վրձնականութիւնը եւ Ֆրանսայի հայ համայնքը, Ֆրանսայի կառավարութիւնը եւ քաղաքական բոլոր դերակատարները համախմբելու անոնց կարողութիւնը:



Ֆրանսայի նախագահին խօսքերէն ետք Մուրատ Փափագեան ողջունած է այս նախաձեռնութիւնը: Դիմելով Նիկոլ Փաշինեանին՝ Ֆրանսահայ կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահը դատապարտած է իր նկատմամբ 19 ամիս շարունակուած Հայաստանի մուտքի իրաւունքի արգելադրութիւնը, ինչ որ ի վերջոյ վերցուած է Հայաստանի արդարադատութեան համակարգին կողմէ: Մուրատ Փափագեան քննադատած է Նիկոլ Փաշինեանը այս խորապէս ոչ ժողովրդավարական եւ պառակտող որոշումը կայացնելու համար:

Մուրատ Փափագեան ընդգծած է այն տարակարծութիւնները, որոնք Նիկոլ Փաշինեանը կրնար ունենալ իրեն հետ՝ միաժամանակ պնդելով զանոնք հրապարակաւորէն արտայայտելու իր իրաւունքը՝ ազատ եւ ժողովրդավարական բանավեճի շրջանակներուն մէջ: Ժողովրդավարութեան այս դասէն ակնյայտօրէն ջղայնացած Նիկոլ Փաշինեանը բարկացած է եւ քննադատած է Մուրատ Փափագեանին՝ Ֆրանսայի նախագահին առջեւ այս նիւթը քննարկելու համար:

Մուրատ Փափագեան յիշեցուցած է, որ Ֆրանսայի նախագահն է այդ նախաձեռնութեան հեղինակը, եւ որ, հաւանաբար, Ֆրանսայի նախագահը միակ անձն է, որ կրնար կազմակերպել այս երկխօսութիւնը:

Այդ պատասխանէն ա՛լ ավելի զայրացած, Նիկոլ Փաշինեանը ըսած է, թէ արգիլած է Մուրատ Փափագեանի մուտքը Հայաստան այն պատճառով, որ վերջինս 1 Յունիս 2021-ին Փարիզի մէջ ցոյց կազմակերպած է անոր դէմ: Այս անհիմն պնդումը բազմիցս տարածուած է Հայաստանի վարչապետի գրասենեակին կողմէ եւ մշտապէս հերքուած է Մուրատ Փափագեանի կողմէ: Այնուամենայնիւ այդ գրոյցի ժամանակ Նիկոլ Փաշինեանը դարձեալ կրկնած է այս մեղադրանքը, իսկ Մուրատ Փափագեանը անգամ մը եւս մերժած է այն, միաժամանակ զարմանալով, որ Հայաստանի անվտանգութեան ծառայութիւնները այս մեղադրանքը չեն ներկայացուցած դատարան:

Չրոյցի աւարտին նախագահ Մաքրոն մէկ կողմ առանձնացած է Հայաստանի վարչապետին հետ, որմէ ետք Փաշինեանը Մուրատ Փափագեանին յայտնած է, որ իշխանութիւնները Հայաստան վերադառնալու իր իրաւունքը վերականգնելու որոշումը պիտի չբողոքարկեն:

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՑ ՈՒՄԵՆԿԹԵՆԻ ՄԵՉ՝ Ի ՅԻՇԱՏԱԿ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԵՒ ՊԱՔՐՈՒԻ ԶԱՐԴԵՐՈՒՆ



Կիրակի, 25 Փետրուարին, Հայ Երիտասարդական Միութեան տեղւոյն «Անի» մասնաճիւղը բողոքի ցոյց կազմակերպեց՝ ի յիշատակ Սուվկայիթի եւ Պաքրոնի մէջ կատարուած 1988-ի ջարդերուն: Սուվկայիթի հիւսիսային շրջանը, Կասպից ծովու ափին, Պաքրոնէ 30 քիլոմետր հիւսիս, ունէր 224 հազար բնակչութիւն, որուն շուրջ 18 հազարը հայեր էին: Հայերուն դէմ ջարդերը սկսան 27 Փետրուարի երեկոյեան եւ յաջորդ օր լայն ծաւալ ստացան: Զարդարարները, քանի մը տասնեակ հոգիէ բաղկացած խումբերու բաժնուած, ներխուժեցին նախապէս նշանառուած հայկական բնակարանները: Մարդիկ կը սպանուէին իրենց տուններուն մէջ, կամ զանոնք դուրս՝ փողոց կամ բակ կը հանէին եւ հրապարակային ծաղր ու ծանակի ենթարկելէ, իսկ կիներն ու աղջիկները բռնաբարելէ ետք կը սպանէին: 28 Փետրուարի երեկոյեան, բանակային ստորաբաժանումներ մտան Սուվկայիթ, սակայն անոնք քաղաքը աստիճանաբար իրենց հսկողութեան տակ առին, քանի որ ուժ եւ զէնք գործադրելու հրաման չէին ստացած: Հայերու սպանութիւնները կը շարունակուէին: Չօրքերու անտարբերութեան պատճառով ամբողջ յարձակեցան գիւղուորներուն վրայ, եւ 270 գիւղուորական տուժեց: Միայն 29 Փետրուարի երեկոյեան, բանակային ստորաբաժանումները վճռական գործողութիւններու դիմեցին եւ կասեցուցին հայերու դէմ ջարդերուն շարունակութիւնը: Ուաշինկթընի ցոյցը կատարուեցաւ Ատրպէյճանի դեսպանատան առջեւ: Յոյցին մասնակցողները կոչ ուղղեցին համայնքի բոլոր ներկայացուցիչներուն, քայլեր առնել եւ աջակցիլ Ամերիկայի Հայ Դատի գրասենեակի կողմէ քաջալերուող՝ ի նպաստ Արցախի եւ Հայաստանի որոշումներուն:

«ՆԱԼԵՊԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ»... ՍՓԻՒՌԱՆՎԱՅՈՒԹԵԱՆ ԳՈՅԱՏԵՒՈՒՄԸ (SUSTAINABILITY)

(Գ. ՄԱՍ)

Փրոֆ. Արա Սայեդ

Նպատակս չէ «Չալեպի ողբերգություն» գիրքին կամ յիշուած հայերէն թէ արաբերէն գիրքերուն, յօդուածներուն մասին գրախօսականներ գրել, կամ վիրաւոր Չալեպի նկարագրութիւնները վերակոչել, ապրուած ողբերգութիւնները վերարտադրել:

Պարզապէս վերոյիշեալ հատորներուն, յուշագրութիւններուն, յօդուածներուն բովանդակութիւնը, եւ մանաւանդ իբրեւ հալէպահայ՝ տագնապի օրերու վկայութիւնս, կենսափորձս մտքի առկայծում մը բռնկեցուցին հաւաքուած մտածումներուս, քանի մը բարդ ծալքեր, երեւոյթներ ընդօժեւում, որոշ համեստ խոկումներ արձանագրելու:

ՍՓԻՒՌԱՆՎԱՅ ԶԱՄԱՅԱԿԱՆ ՄԻԳՐԱՄԱԾ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԶՐԱՏԱՊ ՕՐԱԿԱՐԸ

Փորձեցի փլուզումի եզրին հասնող, օր ցերեկով կենսունակ եւ ինքնավարութեամբ յատկանշուող կայուն կաղնիի նման սուրիահայ գաղութին հոգեվարքի իրավիճակին հասնող համայնքին էութենական դրուածքին մասին հարթակ մը պէտք է: Դեպի ճգնաժամային վիճակին գլորուող, հալէպահայութեան տագնապի մասին հաւաքագրող, փաստագրող, ամրագրող, տեղեկութիւններով հարուստ հաւաքածոյ աղբիւրի մը կայքէջ մը գտնել, ի վերջոյ հաւաքական մեր հաւաստի տեսակետը, լրահոսը, խօսքը եւ խոր-



հուրը կարդալ, հեռու դիմատետրային հաղորդակցութիւններէ: Վերոյիշեալ լուսանկարներու հատորին նմանող, տագնապ ապրած Սուրիոյ հայ համայնքի մասին հրապարակուած լուսանկարներ, հայերէնով արժանահաւատ տեղեկագիրներ փնտռել:

Ինչպէ՞ս տեղեկութիւններ չփնտռել ու չանդրադառնալ Սուրիոյ տագնապի տարիներուն՝ հայ մարդուժի հսկայական կորուստներուն, սուրիահայ նահատակներուն, գոհուած հայ զինուորներուն, անսիրտ դիպուկահարներու փամփուշտներով սպանուածներուն, անվերադարձ առեւանգուածներուն, անյայտ պայմաններով եւ պատճառներով կորածներուն: Ինչպէ՞ս չպէտք է տնտեսական վիթխարի կորուստները, հայ աշխատուժի քանդումը, որ իր ներգործող պիտանի դերակատարութիւնը ունեցած է Սուրիոյ արհեստագիտութեան վերելքին, Չալեպի հայկական թաղամասերու մէջ եւ մանաւանդ Սուրիոյ տնտեսական բազմակերպող նկատուող Չալեպի արհեստանոցներու եւ արդիւնաբերութեան հանրահռչակ ոստանի մէջ հարիւրաւոր հայ արհեստարարներու փոքր եւ մեծ արհեստանոցներու եւ գործատեղիներու, մթերանոցներու ռմբակոծումները, քանդումները, թալանումը, որոնք պատճառ դարձան անհաւատալի գումարներու փնտրումին, հայ դրամատերերու սնանկացումին, գործարար շրջանակներու անվերականգնելի տնտեսական ու նիւթական ուժաթափումի, արդիւնաբեր մարդուժի, արհեստարարներու եւ աշխատուժի համակարգերու անարդար եւ անմեկնելի կազմալուծումին: Անժխտելի է, որ պատերազմի քառասուն իրավիճակի տեւողութեան, ո՛չ միայն տեղացի, այլ նաեւ հայ սեփականատէրներուն, բազմահազար հայ արհեստարարներու պատկանող խանութներուն եւ մանաւանդ աշխատանոցներուն կողոպուտի անհաշիւ թալանումը ընթացաւ ո՛չ միայն հակապետական, ահաբեկչական եւ ընդդիմադիր խմբակներու կողմէ, այլ յաճախ իրականացաւ աշխարհագրօրային միաւորներու մասնակցութեամբ եւ օժանդակութեամբ:

Ուզեցի պէտք է նաեւ արտագաղթած հայ մարդուժի թուային պատկերը, տոհմական անուանացանկերու, անվերականգնելի կորուստներու, կալուածներու աղիւսակներու եւ յատկապէս օրէ օր, տարիներու սահանքին հետ մեր հաւաքական եւ պատմական միգամած յիշողութենէն մոռցուիլ փորձող տուեալներու, տեղեկութիւններու շտեմարան մը գտնել:

Բնականաբար ամենագետ համացանցի ովկիանոսին մէջ երկար փնտրուած լծուեցայ, ուզեցի ճիշակտոր դարձած, բայց արմատախիլ չեղած հալէպահայ համայնքի խոշտանգումներու եւ ճակատագրական խորտակումի պայմաններու մէջ յայտնուած հայութեան տագնապի մասին մանրամասնութիւններ բովանդակող համացանցային հարթակ մը գտնել: Բայց ապարդիւն եր փնտրումը:

Սուրիոյ տագնապի ուժգին հարուածէն ետք, յետպատերազմի՝ անբաղձալի, երբեմն ալ անյոյս, անորոշութեամբ թաթաւուն, երկրի շարունակուող շրջափակման, տնտեսական պատժամիջոցներու, Սուրիոյ բնական հարստութիւններու յափշտակման, կազմաքանդումի եւ յուսաբեկութեան յայտնուած իրավիճակ մը կը տիրէ ներկայիս: Տագնապի կցորդող Գորդեան հանգոյցի բարդ եւ դժուարալոյծ այս ըմբռնելի իրավիճակին մէջ, յատկապէս Փետրուար 2023-ի աւերիչ երկրաշարժի հետեւանքներով ներկայիս հասանելի չէ Բերիոյ Չայոց Թեմի անցեալի ժրաջան ու մշտաթարմ կայքէջը, կարելի չէ համայն աշխարհին բացուող ու պատմական սաղարթախիտ Սուրիահայութեան գոյերթը ծանօթացնող, կենսունակ ու հայատրոփ կեանքը արտացոլող կայքէջը ընթերցել [2]:

Բայց բնական է, երբ չկայ հայ Սփիւռքի տագնապները, արտագաղթերը հաւաքագրող մարդաբանութեան (Anthropology) համահայկական հարթակ մը: Կարելի չէ գտնել վերոյիշեալ անսպասելի կարծուած կամ անկանխատեսուած թուացող Սուրիոյ տագնապէն ետք աշխարհացրիւ շատերու անկկալութիւնները բաւարարող նոյնիսկ համասփիւռքեան հայ գաղութներու տեղաշարժերու բովանդակալից կայքէջ մը կարդալ: Նման համապարփակ գիտելիքներու հայերէնով կամ բազմալեզու արժանահաւատ հարթակ մը չունիք: Օրակարգ մը, որուն պատմափաստագրական թելադրականութիւնը ուղղորդող այժմեականութիւն է, անուրանալի դաստիարակչական պատգամ մը: Ուղեւորային դիտարկումներ կրնան առաջադրել հայ գաղութներու, հայ փոքրամասնութիւններու, համայնքներու տեղաշարժերուն, տեղափոխութիւններուն, տեղաբաշխումներուն եւ մանաւանդ անկախելի հայաթափումի հետ առնչուած մարտահրաւերին:

Իրականութիւն է նաեւ, որ Սփիւռքի հայ գաղութներու պատմութեան մէջ Սուրիոյ տագնապը ընդհանրապէս եւ հալէպահայութեան ողբերգութիւնը միակը չէին եւ վերջինը պիտի չըլլան, նոյնիսկ գերուժ (superpower) կարծուած պետութիւններն ու հոն ապրող հայկական համայնքներն ալ գրեթէ են, ենթարկուած են նման տագնապներու:

ԿԱՅԻՆ ՈՒ ԶԿԱՆ, ԱՆԿԱՍԵԼԻ ՏԵՂԱՇԱՐՄԵՐ՝ ԶԱՅԱԹԱՓՈՒՄ

Սփիւռքահայ պատմութեան նորագոյն ժամանակներու մէջ միայն ութսունհինգ տարիներ անցած են հայ փոքրամասնութիւններու առաջին հայաթափումէն, երբ Ֆրանսան 15 Յուլիս 1938 թուին Թուրքիոյ նուիրեց իր հոգատարութեան տակ գտնուող Սուրիոյ տարածքին մաս կազմող Ալէքսանտրէթը (Սանճաք), Սուրիական Լիւուա Իսկէնտերունի մարզը: Այդ մարզէն, Պելլանի եւ Մուսա լեռան գիւղերէն, հայ բնակչութիւնը Թուրքիոյ իշխանութեան չենթարկուելու համար ձգեց իր դարաւոր բնակավայրերը, տունն ու տեղը, հողերն ու այգիները, կալուածները եւ բռնեց գաղթի ճամբան: Չայեր լքեցին ամէն ինչ եւ անցան Սուրիոյ իշխանութեան տարածքներ: Ապագային հայերու տեղաշարժեր տեղի ունեցան այս անգամ Սուրիոյ հիւսիսարեւմտեան Ազէզէն, Սալամիէն եւ հարաւային շրջաններէն:

Արտագաղթեր, տեղաշարժեր տեղի ունեցան նոյնպէս Սփիւռքի գաւնազան հայ գաղութներէն, իրենց ապրած երկիրներուն մէջ պատահած բազմապիսի տագնապներու պատճառով: Իսկէնտերունի մարզի հայաթափումէն ետք, պարզապէս հաստատուելու համար կարելի է վերոյիշել հայ փոքրամասնութիւններու զանգուածային տեղաշարժերը, որոնք տեղի ունեցած են տարբեր քանակներով եւ երբեմն տարբեր փուլերով, ինչպէս՝ Յունաստանի (1940-1970), Ռոմանիոյ (1945-1970), Յորդանանի (1950-1970), Կիպրոսի (1955-1970), Իրաքի պատերազմին 2003-ին, Թուրքիոյ, Իրանի, Սուտանի, Պուկարիոյ, Սուրիոյ (1950-ականներէն ետք), Պաղեստինի, Լիբանանի (1975-1990) սարսափեցնող տեղաշարժերն ու արտագաղթերը, անշուշտ աջքաթող չըլլալով նաեւ Չայաստանէն հսկայ թիւերով արտագաղթերը, մանաւանդ Չայաստանի անկախութենէն ետք հասնելով մինչեւ արցախահայերու ցեղային գտնումներու, սպանդային եւ արմատախիլման սպառնալիքի տակ իրականացած բռնագաղթը 19 Սեպտեմբեր 2023-ին:

Իրականութիւն է, որ հայաթափումները եղած են անցաւոր, սակաւ մտատանջող, կարճ ժամանակ մը ետք դարձած են անցեալի պատմութիւններ, գլորուելով մոռացութեան կամ անելի ճիշդը պատմութեան գիրկը անցած են, բացի 1915 թուի հայոց պատմութեան արիւնալի մեծագոյն Յեղասպանութիւնը, հայոց մեծագուտուած աղէտը, երբ Արեւմտահայաստանի ազգաբնակչւմամբ հայ ազգը հայաթափուեցաւ, հայերը զանգուածային ձեւով ջարդուեցան, իսլամացուեցան, թրջացուեցան, բռնագաղթուեցան, հողազրկուեցան, սփիւռքացան ու մանաւանդ հայրենագրկուեցան եւ հարկադրաբար դարձան աշխարհաքաղաքացիներ:

Պահ մը մտածենք, ի վերջոյ յաջորդող հայ սերունդներ, հետաքրքրուողներ, գիտահետազօտողներ, պրպտողներ ու՞ր պէտք է գտնեն սփիւռքահայութեան արտագաղթերու, տեղաշարժերու եւ անարգել հայաթափումի պատմութիւնը ներկայացնող վիճակագրութիւնները, վաւերագրական տեղեկագիրները, ամբողջական մանրամասնութիւնները: Վստահ, որ այդ բոլորը ապահով կը գտնուին հանրագիտարաններու, անշունչ պատմագիտական հատորներու, աշխարհացրիւ գրադարաններու, շքեղ թանգարաններու դարաններուն մէջ, մէկ խօսքով մեր արտագաղթերու ողբերգութիւնները, հայաթափումի օրակարգը անհանգստացնող գերմարտահրաւերներ չեղան, մենք այդ մարտահրաւերներով չենք տագնապած, տեսլականով

Շար. Էջ 7

[2] Արա Սայեդ: «Ապագայատեսիլ» www.periotem.com, Գանձասար 2005 թուականի բացառիկ, էջ 119-120.
<http://www.kantsasar.com/news/48434-2/>
<http://www.kantsasar.com/news/48557-2/>

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆՄԵՂ ՅՈՒՇ ՄԸ



Սեան Ա. Մանճիկեան

Ձմռան երկար գիշերները, իրենց երկար ժամերով, տարբեր իւրայատուկութիւն, համ ու հոտ ունին. յատկապէս՝ ընտանիքի անդամները տաքուկ վառարանին չորս դին համախմբելու յատկութիւն:

Ձմռան ցուրտ օրերէն մին, երբ ընտանիքի անդամները վառարանին շուրջը շուրջը հաւաքուած էին, իւրաքանչիւրը իր յիշողութիւնը փորձարկելով քաղցր յուշ մը կը պատմէր: Անոնց խնդրութիւնը ձայնը, միանալով վառարանի փայտերուն ճարճատիւնին, բնակարանը ուրախ ու տաքուկ մթնոլորտով կը լեցնէր:

Թերթատուած այդ քաղցր յուշերէն էջ մը դաջուած էր Սօսիի միտքին մէջ՝ հակառակ երկար տարիներու թաւալումին: Մոռացումը այդ դէպքը կու գէր տուած: Սօսին իր փոքր եղբօր՝ Սուրէնի դառնալով հարցուց.

– Կը յիշէ՞ս, Սուրէն, դպրոցական այն օրը, երբ *ֆուլարը* (դպրոցական փողկապ) տունը մոռցեր էիր, ու ես հապճեպով մը իմ փողկապը քեզի տուի, որովհետեւ ան որ *ֆուլարը* մոռցած ըլլար ծեծ պիտի ուտէր:

– Այդ ալ մոռնալու բա՞ն է, դեռ այսօրուան պէս կը յիշեմ, Սօսի՛, – քրոջ այտը շոյելով ու համբուրելով ըսաւ Սուրէն, – մանկութեանս ամենէն սարսափելի յուշն է, ինչպէ՞ս կրնամ մոռնալ:

– Հիմա ուրախ ենք, թոյլ տուէ՛ք, որ ուրախ տրամադրութեամբ շարունակենք մեր այս համով նիստը, – մայրն էր խօսողը, դողդոջ ձայնով: Դեմքին ժպիտը վերացած էր այդ պահուն, տրամադրութիւնը՝ փոխուած, իսկ ձայնը՝ խափուած:

Մայրն ալ այդ օրն ու դէպքը շատ լաւ կը յիշէր ու ամէն յիշելուն սիրտը նոյն օրուան նման կը ճմլուէր: Ան միշտ իր գաւակներուն սորվեցուցած էր,



որ մարդ արարածը խօսքով կը հասկնայ, ոչ թէ ծեծով, որովհետեւ մարդիկ խելք ու լեզու ունին գիրար հասկնալու համար: Ինք ու ամուսինը երբեք չէին ապտակած իրենց գաւակները:

Սօսի ի գուր կը փորձէր համոզել մայրը, որ դէպքը սովորական յուշի մը տարրութեանն դուրս չհանէ ու չյուզուի: Սուրէնն ալ այդ դէպքը սովորական յուշ մը չէր համարէր, որովհետեւ յիշելն անգամ ցաւ կը պատճառէր իրեն:

Սուրէն երկրորդ դասարանի աշակերտ էր, իսկ քոյրը՝ իրմէ երկու տարի մեծ: Սօսիին եղբօր հանդէպ տածած սերն ու գուրգուրանքը այնքան մեծ էին, որ հակառակ իր փոքր տարիքին, առանց երկմտելու եղբօր *ֆուլարը* մոռցած ըլլալու մեղքը քողարկել փորձած էր, անմիջապէս իր վիզէն քաշելով եւ եղբօր վզին անցնելով գայն: Սակայն քրոջ ստացած ապտակին շառաչիւնը Սուրէնին ականջին մէջ կ'արձագանգէր մինչեւ այսօր, հակառակ ժամանակի թաւալումին: Այդ օրը, երբ անոնք դպրոցէն վերադարձած էին, ուսուցիչին ապտակին մատնահետքը Սօսիին այտին վրայ վերքի մը տպաւորութիւնը կու տար: Սուրէնին սիրտը մորմոքած էր, ու յանցաւորի գագնուով կը նայէր բոլորին: Այդ տարիքին ան չէր կրցած արտայայտել իր պրոպոզիւմը. ցաւով մէջ մը քրոջ դեմքին նայած էր, մէջ մըն ալ՝ հօր ու մօր: Ու դպրոցին մէջ գսպած իր լացը հրաբուխի նման ժայթքած էր. Սուրէն մօր փաթթուած էր՝ իր ապահովութիւնը վերագտնելու համար:

Սօսին այդ բոլորը վերջիվերջ տալուն համար յանցաւոր գգաց: Չա՛ր սատանայ, այդ դէպքը յիշելու ի՞նչ պէտք ունէի: Բոլորին տրամադրութիւնը վատ էր, անոնց դեմքերէն չքացած էր խնդրութիւնը, քար լուրջութիւն տիրած էր, պարզապէս վառարանի փայտին ճարճատիւնը կը լսուէր...

– Սուրէն, երեսդ շտկէ, ո՞ր է խնդրութիւնը, ի՞նչ աշխարհին հոգը ուսերուդ բեռնուցեր ես: Մա՛մ, պա՛պ, այս դէպքը բան չփոխեց մեր դաստիարակութեանն, այդ օր նոյնիսկ մեր դասընկերները վրոգոված էին եղածէն ու կը փորձէին մեզ հանդարտեցնել: Անոնք սիրով շրջապատեցին ու քաջալերեցին մեզ:

Սօսին հիմըրով կ'արտայայտուէր՝ մեղմացնելու մթնոլորտը, կը փորձէր համոզել որ մոռնան եղածը, բայց երկար տարիներ ի՞նչ անգամ չէր կրցած մոռնալ...: Ինչպէ՞ս կրնար համոզուիլ, որ փոքրիկ մը կարելի էր ապտակել իր ընկերներուն դիմաց, այդ ալ փողկապի մը համար: Անոր հոգեկան վիճակը չէ՛ր մտահոգէր ուսուցիչը, իսկ ընկերներուն ներկայութեան նուաստանալը ինչպէ՞ս մոռնալ...:

Դպրոցական յուշերը մեր կեանքի լաւագոյն յուշերը պէտք է դառնալին, սակայն այս դէպքը պղծած էր այդ յիշատակներուն շերմութիւնը, հակառակ անոր որ Սուրէնին ծնողները յաճախ կրկնած էին, որ դպրոցը իրենց երկրորդ տունն էր, իսկ ուսուցիչները՝ երկրորդ ծնողքը:

Սուրէնն ու Սօսին կացութիւնը փրկելու համար իրենց յուշերու պեղման վայրը փոխեցին: Անոնք սկսան հաճելի պահեր վերջիվերջ, հայրն ու մայրն ալ տրամադրութիւն փոխել ձեւացուցին: Սակայն ո՞վ կը փորձէր գո՞վ խաբել՝ չես գիտեր, ընտանիքի իւրաքանչիւր անդամ այդ ապտակին ցաւը մորթին վրայ կը գգար, նոյնիսկ երկար տարիներու թաւալումէն ետք...:

ԿԻՊՐԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ



Ծրարդ. Կարպիս Մինասեան

Նկատի ունենալով հայ-բիւզանդական հնագոյն կապերը, շատ հաւանական է, որ շատ վաղ ժամանակներէ Կիպրոս կղզիին մէջ բիւզանդացիներու կողքին գոյութիւն ունեցած է հայ գաղութ մը: Սակայն փաստագրական հնագոյն ներկայութիւնը յիշատակուած է 578-ին, երբ պարսիկ Խոսրով Ա. թագաւորին դէմ բիւզանդացի զօրավար Մարիկոս Կապադովկացին արշաւանքի ընթացքին Արգանի մէջ կը գերեզմարէ 10090 հայ եւ անոնցմէ 3350-ը կը տեղափոխէ Կիպրոս: Անոնց ներկայութիւնը եւ ռազմավարական դիրքը հետագային պատճառ կը դառնան շատ անելի մեծ թիւով հայերու հաստատումին այդ կղզիին մէջ՝ քաղաքական, առեւտրական եւ ռազմական նկատառումներով:



Յիշատակուած են հայկական անուններ, ինչպէս՝ Արմենիորի, Արմինու, Զոռնոքիփոս, Պատրիկի, Պլատանի, Սփաթարիքո, որոնք կը ծառայէին բիւզանդական իշխանութեան որպէս վարձկան գիւնուորներ կամ սահմանապահներ: Հետագային Կիպրոսի կղզիին մէջ բիւզանդական կայսրութեան ծառայած են հայ զօրավարներ եւ կառավարիչներ, ինչպէս՝ Ալեքսիոս Մուսերէն 868-874 թ., Լեւ Սիմբականացի 910-911 թ., Բազիլ Հայկազ 958 թ., Վահրամ 965 թ. եւ Էլփիտիոս Վրահամիոս 1075-1085 թ.:

Լեւ Սիմբականացի ձեռնարկած է Լառնաքայի Ս. Ղազար Տաճարի կառուցումը, իսկ 973-ին Խաչիկ Ա. Կաթողիկոսը Նիկոսիոյ մէջ հիմնադրած է Հայոց Եպիսկոպոսութիւն: Իսահակ Կոմնենոսի եւ Հայոց Իշխան Թորոս II-ի դատեր հարսանիքէն ետք, 1185-ին Կիպրոս կը փոխադրուին հայ ազնուականներ եւ ռազմիկներ, որոնք կը պաշտպանեն կղզին:

Լատինական դարաշրջանին, 1192-ին, երբ Երուսաղէմի Ֆրանք տիրոջ թագաւոր Գուիտոն Լուսինեան կը գնէ Կիպրոսի կղզին, մեծ թիւով հայ եւ այլազգի հարուստ վաճառականներու, ազնուականներու, ասպետներու եւ ռազմիկներու գանգամաձային ներգաղթ մը կը հասնի Երուսաղէմ, Կիլիկիայէն եւ Արեւելքէն՝ հաստատուելով Կիպրոս: Անոնց առատութիւնը կը շնորհուրին կալուածներ, արտօնութիւններ: Այս երեսոյթին հետ առեւտրական կապերու եւ շարք մը ամուսնութիւններու ընդմէջէն կը ստեղծուի Կիպրոսի Լուսինեան թագաւորութիւնը՝ անքակտելիօրէն կապուած Կիլիկիոյ Թագաւորութեան հետ: Հետագայ ժամանակներուն, հազարաւոր կիլիկեան հայեր ապաստան կը գտնեն Կիպրոս՝ փախչելով մեմֆուքեան արշաւանքներէն ու յարձակումներէն: Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն 5-րդ 1375-ին կ'ապաստանի Կիպրոս՝ շարունակական անկումներ կրելէ ետք: Իր մահուրէն ետք, իր տիրոջն ու արտօնութիւնները, ինչպէս նաեւ զինանշանը 1396-ին Սուրբ Սոֆիայի տաճարին մէջ կը փոխանցուին իր գարմիկին՝ Ծեյմա Ա.-ին, Լուսինեան թագաւորին:

Հետագային Ֆրանքներու եւ Վենետիկեան յաջորդական ժամանակաշրջաններուն, 1192-1489 եւ 1489-1570 թուական, Նիկոսիա, Ֆամագոստա, Սպատարիկո, Կոռնոկիպոս, Պլատինի եւ այլուր կը գտնուէին հայկական եկեղեցիներ ու հայերէնը Կիպրոսի պաշտօնական լեզուներէն մէկը կը համարուէր: Նիկոսիոյ հայերը ունէին իրենց առաջնորդարանը ու կ'ապրէին հայկական թաղամասին մէջ, որ կը կոչուէր «Հայաստան կամ Արմենոյիթոնիա»։ իսկ Ֆամագոստա 12-րդ դարէն ունեցած է հայ եպիսկոպոսութիւն, հայերը ապրած են սուրիական թաղամասին շուրջ: Փաստագրուած է ներկայութիւնը հայկական վանական կարեւոր համալիրի մը, որպէս Աստուածաբանական կեդրոն եւ վանք, ուր սորված է Ս. Ներսէս Լամբրոնացի 1153-1198 թուականներուն. վանքը նախքան եղած է Հայեգայի մօտ գըտնուող Ս. Մակարիոսի զպտի վանքը եւ 1504 թուականներուն ճանչցուած է որպէս Բենեդիկտեան Տաճարի «Նոթր Տամ Տէ Տիր» կամ «Տորոսաս» մայրապետանոց, Նիկոսիա:

Երբ կղզին Օսմանեան ժամանակաշրջանին՝ 1570-1571, գրաւուեցաւ, 40000 թրքական բանակէն վերապրած հայ արիեստաւորներ հաստատուեցան Կիպրոս, մասնաւորաբար Նիկոսիա, ուր ճանչցուած էր հայկական առաջնորդարանը որպէս ցեղային *մեծլիւն* ջնջուած էր Ֆամագոստայի եպիսկոպոսութիւնը:

Քաղաքը պարսպապատ էր, իսկ իսլամներու մուտքը՝ արգելուած: Հայերը լուծուած էին հասութեամբ արիեստներու եւ աշխատանքի, որոնց շնորհիւ բարգաւաճ դարձուցին քաղաքը: 17-րդ դարու սկիզբը, Կիպրոս հաստատուեցան նաեւ պարսկահայ մետաքսի վաճառականներ: 18-րդ եւ 19-րդ դարերուն Նիկոսիա հաստատուեցան հարուստ օսմանահայեր, սակայն կիպրահայերու քանակը որոշ անկում արձանագրեց օսմանեան վարչակազմին սահմանած ծանր տուրքերուն եւ խստութեան հետեւանքով: Տակաւին կար ճշումը կրիպտո(թաքուն)-քրիստոնեաներ (Linobambaki) կամ իսլամներ դառնալու, ինչ որ կը բացատրէ թէ ինչո՞ւ նախկին հայկական գիւղերը, (Արմենիորի, Արտեմի, Ս. Յակոբոս, Ս. Խարիտոն, Կոռնոկիպոս, Մելլունտան, Պլատանին, Սպատարիկոն) 19-րդ դարու վերջերը բնակուած էր թուրք կիպ-

ՄԱՆՐԱՎԿԵՊԵՐ



Յակոբ Չոյաքեան

5.- Աստղային գնդիկները

Նանարը, - բոլոր տարեց կիները նանար կը կոչեինք, - ամռան գիշերները կը հաւաքէր մեզ՝ իր թռռներն ու անոնց տարեկիցները, տանիքը փռուած օթոցներուն վրայ: Գիշեր ատեն տան տանիքէն դիտելու արժանի միակ բանը երկինքն էր: Մեր պատահ մը երկինքին չափ աստղային երկինք ես երբեք տեսած չունիմ: Երկու լեռներու միջեւ ինկած այդ խոր կիրճին վրայ երկինքը կը բանար իր բոլոր գաղտնիքները: Նանարը կը բացատրէր աստղերուն ու աստղաբոյլերուն ձեւն ու կու տար անունները՝ Կանգուն Կշեռք, Եօթը Աղբրտիք, Գողի ճամբան, Մեծ Ծափիկ, Փոքր Ծափիկ, Լուսաստղը: Մեր պատմութեան դասագիրքէն գիտեիք, որ Գողի ճամբան կը կոչուէր Յարդգողի ճանապարհ: Մեծ Ծափիկն ու Փոքր Ծափիկը մեծ ու փոքր արջերն էին: Մեր բարբառով ծափը տապակն է:

- Նանար, ի՞նչ է ատոր անունը:
- Մատով ցոյց մի՛ տաք, աստղը կը մարի, - կը բացատրէր Նանարը՝ մեր մատիկը վար հրելով:
- Կը հաւատայինք, որ ամէն ծնունդի աստղ մը կ'աւելնայ, ու մենք կը փորձէինք մեր աստղը գտնել երկինքին վրայ:
- Ատուպ մը կը թռէր ու կ'անհետէր լեռան ետին:
- Աստուած ողորմի, - կ'ըսէր Նանարը, - մէկը մահացաւ:
- Ո՞ւր ինկաւ, - կը հարցնէինք մտահոգ:
- Պաշտօտի գերեզմանատունը, - ըսաւ անգամ մը:
- Ի՞նչ եղաւ:

Փշրուեցաւ գնդիկ եղաւ, ի՞նչ պիտի ըլլայ:

Այն ատեն գնդիկը մեր ամենէն սիրելի խաղալիքն էր, բայց բոլորիս չէր վիճակուէր առատ գոյնգոյն գնդիկներ գնել շուկայէն: Մերը, շատ անգամ, գետահունէն կամ ծովափէն հաւաքուած խումպապիկն էր, կըսէր, ողորկ ու դիմացկուն քարը:



Կեսօրին, երբ մեծերը միջօրեի մրափը կը քաշէին, Վարդանն ու ես որոշեցինք երթալ Պաշտօտ՝ գընդիկ հաւաքելու: Վերի կածանը բռնեցինք ու բարձրացանք լեռնանցքն ի վեր: Գիտեիք, որ այդ կածանը Պաշտօտ կը տանի:

- Մեր դէմը ելաւ վերի թաղի Ստեփան ամմոն:
- Ո՞ւր կ'երթաք այդպէս, տղա՞ք, - հարցուց:
- Նանարը ըսաւ, որ աստղը ինկաւ Պաշտօտ, փշրուեցաւ գնդիկ եղաւ, կ'երթանք հաւաքելու:

- Վա՛րհ, ուշ մնացեր էք, բոլոր գնդիկները ես հաւաքեցի տուն տարի, - ըսաւ, համոզեց տարաւ տուն: Բակի թթենիին տակ, հինգ քար ու սալուկ կը խաղային Ստեփան ամմոյին հինգ թէ վեց աղջիկները: անոնք գնդիկն ի՞նչ ընէին...: Ստեփան ամմոն հինգական գնդիկ դրաւ մեր ափերուն մէջ ու ճամբեց:

Այսպէս, եւ մենք ունեցանք մեր աստղային գնդիկները: Ստեփան ամմոն չքանդեց մեր հեքիաթը:

6.- Բարի ճամբայ քեզի

Լսեցինք, թէ Զերոք պապուկը նոր ակռայ հաներ է: Ծոռները հատիկ եփեցին, ակռահատիկ սարքեցին, ու ամէն մարդ գնաց Զերոք պապուկին նոր ելած ակռան շնորհաւորելու:

Հալէպէն ատամնաբոյժ մըն ալ եկաւ ակռատեսի: Ըսաւ՝ լինտը մաշեր է, լստոսկը՝ ցցուեր: Ո՞չ ոք հաւատաց: Բոլորը գիտէին, որ Զերոք պապուկը նոր ակռայ հաներ է:

104 տարեկանին մահացաւ: «Օրհնեալ մահ է», ըսին: Ո՛չ ախ, ո՛չ վախ: Գիւղի մարդիկ իրարու ձայն տուին, մէկ-երկու հոգի գնաց դագաղ շինելու, միւսերը ելան գերեզմանոց՝ փոսը փորելու: Հազար ու մէկ բան կար պատմելիք Զերոք պապուկի մասին, որ տեսեր էր 1896-ի հնչակեաններու ձերբակալութիւնը, 1909-ի Թալանտը, Տարագրութիւնն ու տունդարձը, ինչէր ու ինչէր: Մեռելի մասին լաւն ալ կը խօսին, գէշն ալ: Այս մարդուն մասին գէշ բան պատմել դժուար էր: Օր մը ելեր է Շուշանին առջեւ՝ ըսեր. «Աղջիկ, առ գիւ, թէ չէ կը փախցնենք»: «Պէտք չկայ, - ըսեր է Շուշանը, շէնքով-շնորհքով թող ըլլայ, ուզականներդ իրիկունը մեր տուն դրկէ»: Իրենց կեանքն ալ շէնքով-շնորհքով լեցուն եղած էր:

Վարի թաղէն խումբ մը դագաղը ուսամբարձ բերին կամաց-կամաց: Ետեւէն սեւագետս կիները կու գային: Շուշան նանարը պարելով կու գար: Զեսապցիները կորուստի մը վրայ կատարուող ողբին պարել կ'ընէին:


- Աճապարեցիր, կտորի՞ճ Զերոքս, - կը պարէր Շուշան նանարը, - տակաւին երէկ կացինը առած՝ չոր կաղնի տապալեցիր, փայտս պատրաստեցիր... Բարի ճամբայ քեզի, Զերոքս, բարի ճամբայ...

Թուրքիոյ նուրջ

Մարդու իրաւունքներու խմտսման մասին ՉեկոՅՅԻՆ ՄԷՋ ԿԱՅ ՆԱԵԻ ԹՈՒՐԷՈՅ ԱՆՈՒՆԸ

Նիւ Եորք գտնուող Մարդու իրաւունքներու հետազոտութեան կազմակերպութիւնը (HRW) հրապարակած է «Զեզ պիտի գտնենք. համաշխարհային դիտարկում մը այն մասին, թէ պետութիւնները արտերկրի մէջ գըտնուող իրենց քաղաքացիներուն վրայ ինչպէ՛ս ճշում կը բանեցնեն» վերնագրով զեկոյց մը:

Չեկոյցին մէջ առկայ պետութիւններու շարքին է նաեւ Թուրքիան: Ընդհանուր առմամբ 46 էջ բաղկացած զեկոյցը որակուած է որպէս հետազոտութիւն, ուր մարդու իրաւունքները կը քննուին այն տեսանկիւնէն, թէ կառավարութիւնները ինչպէ՛ս թիրախ կը դարձնեն արտերկրի մէջ գըտնուող իրենց հակառակորդները, ընդդիմադիրները եւ քաղաքական մրցակիցները:



HRW-ը զեկոյցին մէջ կը յայտնէ նաեւ, որ թրքական պետական «Anadolu» լրատուական գործակալութիւնը պարբերաբար տեղեկութիւններ կը հրապարակէ Թուրքիոյ ազգային հետախուզական ծառայութեան (MIT) կողմէ արտերկրի մէջ իրականացած գործողութիւններու հետեւանքով Թուրքիա վերադարձուած անձերու մասին:

Գերմանական «Deutsche Welle» (DW) պետական կայքի թրքերէն հրապարակաշարին նմանատիպ դէպքերով առանձնացուած է 20 պետութիւն, որուն մէջ Թուրքիան եւս առկայ է:

Թուրքիոյ մասին «առեւանգումներ եւ բռնի անհետացումներ» բաժինին մէջ գրուած է.

«Ակնյայտ է, որ թրքական կառավարութիւնը կը հետեւի «կիւլենական շարժումին» հետ կապ ունենալու մէջ կասկածելի եւ արտերկրի գտնուող թուրք քաղաքացիներուն»:

ՅՈՒՆԱՍՏԱՆ, ԿԻՊՐՈՍ ԵՒ ՖՐԱՆՍԱ ՎԵՐՑ ԿԻՐԱՐԿԱԾ ԵՆ ԹՐԲԱԿԱՆ ՀԱՐՈՒՍՏԱՅԻՆ ԱՐՑՆԵՐՈՒ ԳՆԱՆ ԲԱՆԱՉԵԻՆ ԴԵՍ



«Երմէնիապէր»- Յունաստան, Կիպրոս եւ Ֆրանսա հրաժարած են թրքական արտադրութեան հարուածային TB2 անօդաչու թռչող սարքերու (ԱԹՍ) եւ արկերու գնումը ֆինանսաւորելէ:

Յիշենք, որ անոնք պետք է գնուէին եւրոպական ֆոնտերով եւ դրկուէին Ուքրաինա:

Յունական «Kathimerini» թերթի հաղորդումով, նախորդ շաբաթասկիզբին տեղի ունեցած Եւրոպական Միութեան (ԵՄ) քաղաքականութեան եւ անվտանգութեան կոմիտէի ժողովին ընթացքին 3 երկիր վեթօ կիրարկած է այդ գործարքի իրականացման բանաձեւին դէմ:

ԿԻՊՐԱՅԱՅ...

Սկիզբ՝ էջ 5

րացիներով: Այս նեղութիւններուն շարքը համալրուեցաւ նաեւ 1821-ին Յուլիսեան արիւնալի իրադարձութիւններով, որմէ ետք տեղի ունեցան բարեւաւումներ՝ այսպէս կոչուած «թանգիմաթի շրջան»-ին՝ 1839-1876, որուն արդիւնքով Հայոց եպիսկոպոսը մասնակցեցաւ վարչական խորհուրդին, հայերը մասնակից դարձան քաղաքացիական ծառայութեան: 1869-ին Սուեզ ջրանցքի բացումը ձեռնտու եղաւ նաեւ հայ վաճառականին, ու անոր վիճակը մասամբ ընդունելի դարձաւ:

1878-ին, անգլիացիներու Կիպրոս ժամանումով եւ իրենց որդեգրած առաջադեմ վարչակարգով, հայկա-

կան փոքրաթիւ համայնքը վերստին բարգաւաճեցաւ՝ մասնաւորապէս հայոց լեզուական հմտութեան շնորհիւ: Հայերը ընդունուեցան որպէս թարգմանիչներ հանրային ծառայութիւններու, որպէս տնտեսներ ու աճեցաւ համայնքին թիւը: Օսմանցիներու կողմէ իրականացուած սարսափելի ջարդերուն (1894-1896-1909-1915-1923...) հետեւանքով Կիպրոս լայն բացաւ իր գիրկը՝ ընդունելով աւելի քան 10.000 փախըստականներ՝ Չմիւռնիայէն, Կոստանդնուպոլիսէն, Կիլիկիայէն:

Անոնք Կիպրոսը դարձուցին իրենց նոր հայրենիքը եւ դարձան արժանաւոր քաղաքացիներ՝ մշակելով վաճառականութիւն, արհեստներ, ստեղծելով նոր մասնագիտութիւններ, հիմնելով գործեր: Այսպիսով անոնք զարգացուցին կղզիին տընտեսական եւ ընկերային կեանքը:

Պոփսակետ

ՀՈՐԻՆ ԹԱՂԸ



Մարուշ Երամեան

Պարտեզներու տունէն ետք - ուր ծներ եմ, բայց բնաւ չեմ յիշեր - կ'ապրէիք Յորին թաղը (Հարթըլ Ճըպ), ուր հազիւ երկու շէքեր կային՝ մերը եւ կողքինը: Մնացեալը տուներ էին, գետնայարկով եւ բախտաւոր պարագային՝ առաջին յարկով մը: Մեզի հետ այլ հայ ընտանիքներ եւս կ'ապրէին Յորի թաղին մէջ:

Թաղը բանուկ էր ոչ թէ ինքնաշարժներով, որոնք թիւը այնքան փոքր էր այդ հեռու օրերուն, այլ եռուգեռով. ցերեկները շատ կանուխէն, իրենց ապրանքը գովել-գովաբանելով կը հասնէին իշապանները, եւ ամէն մէկը իր սովորական տեղը կը կառնէր: Թաղը կը լեցուեր զիլ ձայներով գնում ընող կիներուն, որոնք անսպասման սակարկութիւն պիտի ընէին, պտուղ կամ բանջարեղէն գնելէ առաջ:



– Ում Սահակ, ամէն օր նոյն պատմութիւնը կ'ընես, դեռ չտորվեցա՞ր որ գոնէ քեզի իսկական գիւնը կ'ըսես, ե՛ս ալ չեմ յոգնիր, դո՛ւն ալ... առնո՞ղ ես, կշռեմ, թէ ոչ՝ այսօր ֆասուլիա մի՛ եփեր, դդում ըրէ, դդումը աւելի աժան է...

Կեսօր չեղած թաղը կը պարպուեր, իշապանները պարագայ խուրջիներով կը հեռանային, կիները կը շտապէին կէսօրուան ճաշը հասցնել դպրոցէն եկող սոված գաւակներուն եւ գործէն ճաշի դադար առած ամուսին համար:

Թաղը ամբողջ տարին չտեսած խնորհուրդ Աւագ Ուրբաթ օրը կը տեսներ, երբ կողքի թաղերէն շատ մեծ թիւով տղաք կը հաւաքուէին հաւկթախաղի մրցումներուն մասնակցելու համար: Նպարավաճառի մեծ խանութին տերը հարիւրաւոր հաւկիթներ խաշած-ներկած կ'ըլլար եւ գանոնք կը ծախէր այդ տղոց, յետոյ, մրցումները լրանալէն ետք, անոնցմէ ետ կը գներ կոտորած հաւկիթներ կէս թէ քառորդ գինով եւ... կը ծախէր տանտիկիներուն, որոնք այդ օրուան ընթրիքը սկիզբէն իսկ որոշած կ'ըլլային՝ թիրիթ (Պոլսոյ բարբառ), հաւկիթով աղցան...

Նախակրթարանի իմ օրերուն դպրոցէն տուն կու գայինք ժամը 12:00-ին, արագ-արագ կը ճաշէինք, որովհետեւ ճիշդ ժամը 1:30-ին դասերը կը վերսկսէին, իսկ մենք տուն գալու համար շա՛տ ժամանակ վատներ էինք. ճամբուն վրայ հազար հետաքրքրական բան կար դիտելիք, փորձելիք, փորձիկ կառքին վրայ խելօք շարուած եւ մեր խելքը գլուխէն տանող գունաւոր շաքարները, մանուշակ շաքարները, կարմիր ձուկ շաքարները... Միշտ ալ մեզմէ մէկուն քով երկու ֆրանքսոց մը կ'ըլլար. կը գներ փոքրիկ տոպրակ մը շաքար, եւ հազար կռիւ-կիսթրոթով կը բաժնուէինք, ամէն մէկս մէկական առնելով, իսկ տոպրակին տիրոջը «ազնուաբար» երկու հատ ձգելով...

Ժամը չորսին, երբ կրկին նոյն ճամբան կը բռնէինք Կիւլայէնկեան դպրոցէն տուն դառնալու համար, ճամբուն վրայ, Սիւլեմանիէի պէնզինի կայանին կողքի փոքրիկ պարտեզ-սրճարանը կը մտնէինք պահ մը, Վիգէնը, Մանուէլը եւ ես (արդեօք ո՞ր է Մանուէլը եւ ի՞նչ կ'ընէ: Վիգէնը գիտե՛մ ուր է): Այդ ժամուն յաճախորդ չըլլալուն, սպասեակը բան չէր ըսեր, նոյնիսկ աթոռին վրայէն չէր ելլեր, ուր նստած կը մրափէր. արդէն սորվեր էր մեր ձայները, գիտէր որ մենք ենք, եւ քիչ մը վազվզելէ ետք փոքրիկ աւագանին շուրջ, պիտի ելլենք երկաթեայ դարպասէն դուրս եւ շարունակենք մեր ճամբան:

Աշնան իրիկուններուն սքանչելի էր ծիծեռնակներուն երամը, որ կարծես կը խաղար կապտա-նարնջագոյն երկնքին վրայ, մանուկներու խումբի մը պէս աղմկելով: Ծատ կը սիրէի դիտել իրենց թռիչքը, մկրատածու պոչերը. կը դիտէի եւ գեղեցիկ գգացում մը կը ներխուժէր ներսս, քաղցր ու տաք, մինչէն Մանուէլը յիշեցներ.

– Հատե՛, կ'ուշանանք կոր, մամադ կը բարկանայ ...

Նման իրիկուն մըն էր, Երկուշաբթի յետմիջօրէ մը, որ սովորականէն աւելի կանուխ արձակուեր էինք, որովհետեւ «Վեհափառը վախճանեցաւ»

ըսուեր էր: Բայց մենք ո՛չ Վեհափառին ով ըլլալը գիտէինք, ոչ ալ վախճա ... ի՞նչ, բառին ծանօթ չէինք, շատ դժուար բառ էր եւ ... կարելոր ալ չէր: Կարելորը՝ մեր կանուխ արձակուիլն էր:

Նոյն գոռում-գոչումով - թերեւս ալ քիչ մը աւելի, որովհետեւ ուրախ էինք կանուխ արձակուած ըլլալուն եւ կրնայինք մեր փոքրիկ պարտեզին մէջ աւելի երկար խաղալ - դպրոցէն ելանք եւ ...

– Մեղք ունի, եւաւրուս, մեղք ունի, մի՛ պոռաք, Վեհափառը վախճաներ է, - ըսաւ նստած կիներէն մէկը: Տան դրան առջեւ նստած միւս կիներն ալ իրեն պէս տխուր էին, նոյնիսկ՝ թաց աչքերով:

Այդ անծանօթ կիներուն տխրութիւնը այնքան խորունկ էր եւ փոխանցիկ, որ չկրցանք վայելել կանուխ արձակուելուն քանի մը ժամերը: Անշուշտ պիտի տխրէին այդ կիները, ամբողջ Հալէպի գաղութը պիտի տխրէր, որովհետեւ նախքան Կիլիկիոյ կաթողիկոսական գահին բազմիւր, Չարեհ Սըրբազան եղած էր Առաջնորդը Բերիոյ Հայոց Թեմին:

Տարիներ ետք գիտցայ, որ այս օրերուն պէս օր մըն էր՝ 18 Փետրուարին (1963), Կիլիկիոյ Վեհափառ Չարեհ Ա. Երջանկայիշատակ Կաթողիկոսին վախճանումը: Բաւական ետքն էր նաեւ, որ մօրս լուսանկարներուն մէջէն գտայ խմբակարգ Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի Տիկնանց Յանձնախումբին. կեդրոնը նստեր էր Վեհափառ Հայրապետը, որուն լուսաւոր միտքին եւ ազգասէր հոգիին իրականացած երազն է մեր Ճեմարանը, եւ ճիշդ իր ետին մայրս կանգնէր է: Ինչպիսի՞ հպարտութիւն էր ինծի համար տեսնել այդ խմբակարգը եւ գուրգուրանքով պահել ...

Չմբան իրիկուններուն դժուար կը բաժնուէի ընկերներէս, որոնք պիտի երթային իրենց քոյր-եղբայրներուն աղմուկով տաքցած տունի մը ուրախութեան, մինչ մեր տունը մի՛շտ հանդարտ էր, մի՛շտ կարգ-կանոնով, ամէն բան դասաւորուած:

Բայց կար վառարանին կողքին, դասագիրքը գրկած երագելու պահը, քնանալէն անմիջապէս առաջ:

Մեծ, քառակուսի վառարան մըն էր՝ Արամգօ, Արամ Կեօվճեանին գործարանին արտադրութիւնը. յետոյ անոր աղջիկը՝ Արաքօն (Արաքսի), ինծի դասընկերուի պիտի ըլլար, եւ որուն կարմիր, ըմբոստ կարմիր մագերն ու մի՛շտ ժպտուն դէմքը շա՛տ կը սիրէի. հապա բարձր քրքիչը, որ ամէնէն վատ պահերուն իսկ գրաւորի մը ցած նիշ առնել կամ անկարգութեան համար ծնողը դպրոց կանչուիլ - այնպէս կը տարածուէր դասարանին մէջ, որ բոլորս ալ կը հաւատայինք թէ եղածը «պարագայ բան է, վաղը մամադ դպրոց կու գայ, օրիորդ էլ մաստղ քիչ մը կը գանգատի, կը վերջանայ-կ'երթայ, ինչ այդքան վախցեր ես, պարագայ բան է եղածը...»:

Ամէնէն հաճելիս սակայն անկողնիս մէջ քնանալն էր, որովհետեւ անկողնիս վերեւի պատուհանէն երկնքի մե՛ծ կտոր մը կ'երեւէր, ուր աստղերը ինծի կը սպասէին կարծես, կը սպասէին որ օրուան եւ տխրութիւններուն մասին պատմեմ իրենց, ու յետոյ իրենք ինծի հեքիաթներ կը պատմէին, Հայկանոյշ *Նէտիս* փոխարէն, որ նոր մեռեր էր:

Երբ այս տունէն այլ տուն մը փոխադրուեցանք, երկա՛ր ատեն չէի կըրնար հանգիստ քնանալ, որովհետեւ նոր տան ննջարան չունէր երկնքին վրայ բացող պատուհան մը, ուրկէ կարենայի աստղերուն հետ գրուցել:

Հորի թաղի մեր տունէն շատ բան մոռցեր եմ. բայց անկողնիս վրայի այդ պատուհանը, իր բոլոր մանրամասնութիւններով, գոյնով եւ չափով, եւ անկէ ծնած քաղցրագոյն ապրումներով կը յիշեմ տակաւին:

«ՆԱԼԷՊԻ...»

Սկիզբ՝ էջ 4

մը կամ գործնական ծրագիրներով չենք գրահապատուած կանխելու սփիւռքահայ հայաթափումի յաջորդող նման եղելութիւնները: Ինչո՞ւ մեր արտագաղթերու, տեղաշարժերու եւ հայաթափումի ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ ԶԵՆԸ ԶԵՂԱԾ, ԶԵՆԸ ԶԵՂԵՐ:

Մենք ո՛չ միայն գրադարանացուցած ենք հայաթափումի մարտահրաւերը, այլեւ իրականութեան մէջ թանգարանացուցած ենք, ապա գայն պատմականացնելով դիմած ենք բազմազան մեծ աշուք յուշամատեններ պատրաստելու մեծածախս ծրագիրներուն:

Արդեօք ժամանակը չէ՞ այդ բազմահարուստ մատենագիտութիւնը լոյսին հանել, ծանօթացնելու սփիւռքահայութեան կարողականութիւնը եւ յատկապէս հայու մարդաբանութիւնը: Ծիշդ է որ կային, բայց չվերադարձան, իրենց հետ տարին ապրումս հայու կեանքի ընդհանրապէս աննիւթեղէն ժառանգութիւնը, գոյացութեան սեփական դրոշմը, հայ մարդու գոյատեւութեան նշույլները:

կան դրոշմը, հայ մարդու գոյատեւութեան նշույլները:

Հոս կարելի է Սփիւռքի հաստատութիւններէն օրինակ մը յիշատակել, Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի սխարլի գործունէութիւնը, կազմակերպած գիտաժողովները, երախտաշատ հրապարակումները, ուսումնասիրելու հայկական Սփիւռքի, յատկապէս միջինարեւելեան գաղութներու՝ Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Յունաստանի, Կիպրոսի, Իրաքի, Եգիպտոսի, Սուտանի, Զուելթի, ԱՄԷ-ի եւ այլ երկիրներու պատմութիւնը, ուշադրութիւնը բեւեռելով հայ փոքրամասնութիւններու պատմութեան, մշակոյթին, հիւրընկալ երկիրներուն եւ Հայաստանի հետ յարաբերութիւններուն վրայ, հակիրճ խօսքով մասամբ մը գիտականօրէն պատմականացուցած է մեր ապրուած սփիւռքահայ կենսարար կեանքի մէկ համեստ մասնիկը: Գովելի այդ աղբիւրագիտութիւնը կը շարունակէ պատմականացած բազմահատոր յուշամատեններու ընդունաւորան մը մտալ:

(Շարունակելի 3)

ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀԱՐԺԱՆԿԱՐԸ ԵՒ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԸՆԴԳԷՄ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՄԻՆԻՑԵԱՆ. ՀԱՄՕ ԲԵԿ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՖԻԼՄԵՐԸ

Լուսին Գասպարեան
ՆԾ-ԱՄՆ, 1 Փետրուար 2024
Աղբիւր՝
keghart.org

«Երկիր Նայիրի»

«Երկիր Նայիրի»-ի առաջադրանքն էր ցոյց տալ այն խոչընդոտները, որոնք Հայաստան պիտի հանդիպէր, սակայն յաղթահարելու գաղտնի անկախ հանրապետութենէն խորհրդային պետութեան վերածուելով: Բեկ Նազարեան օգտագործած է ֆիլմերու ստեղծման այն արհեստագիտութիւնը, որ օգտագործած էր «Տունը Հրաբուխի Վրայ» ֆիլմին մէջ: Նայիրին Հայաստանի հնագոյն անուններէն մէկն էր, հետեւաբար ալ ֆիլմին գլխաւոր



«Երկիր Նայիրի»-ի բեմադրիչն ու հեղինակը Համօ Բեկ Նազարեանն է: Երաժշտական նոր տարբերակը յորինած է Երաժշտական Վահագն Հայրապետեան՝ Բրիտանական Քոլումբիայի Հայկական Մշակութային Միութեան պատուերով:

հերոսը Նոյնինքն Հայաստանն էր: Բեկ Նազարեան ստեղծած է շարք մը խակ, անմշակ պատկերներ՝ ցոյց տալու հայրենիքի վերակառուցման մարտահրաւերները եւ ակնյայտօրէն հեռու մնացած է հայոց հայրենիքը բնութագրող բազմաթիւ պանծալի համայնապատկերներ նկարագրել: Բեկ Նազարեան Դրամատիքութեան բարոյապետ սկանկացած ըլլալու կերպարանքը ցոյց տալու համար օգտագործած է անհեթեթ գաղափարներ՝ պարզելու համար, թէ ինչպէ՞ս Առաջին Համաշխարհային Պատերազմէն ետք հայերուն տրամադրուող ամերիկեան օգնութիւնը եւ անհամապատասխան երկարիքներուն, եւ մեծամտութիւն կը բուրբ: Երբ գիւղացիներու խումբեր արտերկրէն հասած օժանդակութեան կողովները կը բանային, անոնց մէջ կը գտնուէին օգտագործուած շքեղ գլխարկներ, բաճկոններ եւ ուլունքներով զարդարուած հագուստներ, որոնք պիտանի չէին բանուորներուն, սակայն անոնք հեզնանք յառաջացնող նման հագուստներով ստիպուած էին բարդ աշխատանք տանիլ ու խճախառն արտերը մշակել: Ֆիլմը ոչ մէկ բացատրութիւն կուտայ, թէ ինչո՞ւ ամերիկացիները պետք է օգնեն Հայաստանին, թէ ո՞րք աշխարհը տեղեկ էր այն հսկայական օգնութենէն, որ ուղարկուած էր Յեղասպանութեան տարիներուն՝ «սովամահ դարձած հայութեան» օժանդակելու համար:

Նոյն սկզբունքով Բեկ Նազարեան կ'առաջարկէ բազմաթիւ տոնքիշտական, բանաստեղծական տեսարաններ, որոնց մէջ մարդիկ կ'աշխատին Նոյնանման կշռոյթով՝ ցոյց տալով խորհրդային պետութեան ձեւաւորման սղագրութիւնը: Անոնց ամրակում, կիսամերկ իրաններէն քրտիկը կը ծորէր՝ ի նշան այն մկանային ուժին, որ իրագործեց Լենինականի (Կիւմրի) ջրանցքը եւ արդիւնաբերական այլ նուաճումներ: Բեկ Նազարեան այնուհետեւ դիտողին ցոյց կու տայ ընդհանուր ուրուագիծը յաջողակ գիւղապետութիւններուն, համայնքներուն եւ վերոնշեալ ջրանցքի առեղծուածային խափանարարներուն, ապա շրայօրէն պատկերներ կը նուիրէ խեղճացած հայերուն, որոնք, ըստ իրեն, միայն խորհրդային հնարամտութեան եւ ուսումնական բարձրամակարդակ հաստատութիւններու շնորհիւ կը դառնան բժիշկներ, իրաւաբաններ եւ երկրաչափներ:

«Երկիր Նայիրի»-ն իրողութիւնները այնքան կ'աւաղաղէ, որ 1918-ին դժուարութեամբ նուաճուած, նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը կը համարէ ֆաշիստական ձեռնարկութիւն մը, որ համատարած տիֆի, սովի եւ այլ ողբերգութիւններու հասցուց իր քաղաքացիները՝ մոռնալով «սենեակը պահուած փիղը»: Միւս կողմէ պաշարուած, հալածուած, ուժասպառ, համաճարակէ վարակուած եւ Յեղասպանութեան ենթարկուած հայութիւնը իրաջեղով պայքարեցաւ թուրքերու եւ անոնց մեղսակից սովետներու կողմէ համադրուած բնաջնջման ծրագիրներուն դէմ: Անոնք երկուքն ալ Հայաստանի անկախութեան հռչակումը հաշտ աչքով չէին տեսնել: Այս ամենը ուղղակի ազդեցութիւն ունեցած էր բնականաբար այդ օրերու հայ մարդու առողջութեան վրայ: Սովետները չէին, որոնք 1918-ին հայերը փրկելէ լիակատար բնաջնջումէ, ընդհակառակն. հայերն էին, որոնք ունենալով գաղթականներ, որբեր եւ անբուժելի հիւանդներ, ազգովին պայքարեցան ու վանեցին թրքական հորդանները՝ փրկելու այն ինչ որ մնացած էր

Հայաստանէն, մինչդեռ ռուսական բանակը քաշուեցաւ Կարսէն եւ նահանջեց դեպի բլուրները: Սովետները ժամանակ չկորսնցուցին տապալելու անկախ, փխրուն Հայաստանը: Սակայն «Երկիր Նայիրի»-ն դիտողը այս իրա-



«Երկիր Նայիրի»-ին մէջ արտերու մշակումը՝ շքեղ գլխարկով եւ բաճկոնով:

կանութեան իրագրել չի դառնար: Ականատեսը ըլլալով հայ գործատերերուն տրուած դերերուն եւ անոնց բնութագրերուն՝ այս ֆիլմը դիտողը կը հասկնայ, որ անոր ռազմավարական նպատակն է ներկայացնել այնպիսի կերպեր, որոնք չեն քաջալերել հայերը ընկալելու իրենց աշխարհը ազգային, հայրենասիրական, ազատ մտածողի կամ ձեռնարկատերի դիտանկիւններէ:

Վերոյիշեալ երկու ֆիլմերը յատկապէս կը յիշեցնեն Նացիստական Գերմանիոյ շատագոյ լենինի Բիֆենշթալը եւ Խորհրդային Միութեան շատագոյ Սերկէյ Եյզենշթալը թէ՛ իրենց խիստ գրաւիչ, արդիական, սեւ ու սպիտակ տեսողական արուեստով, եւ թէ՛ քարոզչական արժեքներով: Բեկ Նազարեանի համար դժուար պիտի ըլլար նուաճել ֆիլմարտադրութեան հսկայական հարթակը (1920-ական թուականներէն սկսեալ), եթէ ան ցուցադրէր հայոց բացայայտ ազգայնականութիւնը, հայերը ներկայացնելու իրենց իսկական էութեամբ, որպէս մտաւորականներ, նորարարներ, կամ դուստրական որեւէ բան վերագրէր դրամատիքութեան կամ յղում կատարէր ռուս-թրքական գաղութատիրական ծրագրերու: Պետք է իմանանք, սակայն, որ սովետահայ արուեստագետները լաւապէս ըմբռնած էին, որ ԽՍՀՄ-ի տարածքին իրենց ասպարեզին մէջ հռչակաւոր դառնալու համար հարկ էր գոհել իրենց ազգային արժանապատուութիւնը: Այդ էր հանրածանօթ դառնալու տուրքը:


Միտք բանին՝ մենք ունինք երկու շարժապատկերային ներկայացումներ, որոնք մէջ ակնյայտօրէն կը բացակային Հայաստանի եւ հայերու նկատմամբ ռուս-թրքական թշնամանքի որեւէ յղում: Նոյնը կարելի է ըսել «Տունը Հրաբուխի Վրայ» ֆիլմին մասին: հայերու պատմութիւնը Պաքուի քարիւղարդիւնաբերութեան մէջ, եւ այն, ինչ տեղի ունեցաւ այնտեղ՝ փոխելու անկախ ուժերու գոյութիւնը, կը մնայ անբացատրելի: (Այդ օրերուն Պաքուի կենսքին եւ քարիւղային տնտեսութեան բարգաւաճման մասին իրագրել դառնալու լաւագոյն աղբիւրը Ալեքսանտր Շիրվանզադէի «Քառս» խորագրեալ վեպն է: Կարելի է սերտել նաեւ քարիւղի մարզին մէջ հայ ռահվիրաներու՝ Ալեքսանտր Մանթաշեւի եւ Գալուստ Կիւլպենկեանի կենսքը): Չկայ նաեւ որեւէ յիշատակում Հայոց Յեղասպանութեան հրահրման մէջ Ռուսիոյ եւ Թուրքիոյ դերակատարութեան, ինչպէս նաեւ 1915, 1918 եւ 1920 թուականներուն Հայաստանը կլանելու անոնց ծրագիրներուն: Երկու ֆիլմերուն մէջ ալ պատմուած պատմութիւնները անկասկած դիտողը կը թողուն այն տպաւորութեան տակ, որ Հայաստան եղած է վայրենի եւ յետամնաց շրջան մը նախքան սովետներու ժամանումն ու հայերուն քաղաքակիրթ դարձնելը եւ իբրեւ թէ վերջինիս հետեւանքով միայն երեւան եկած են հայ բժիշկներ, իրաւաբաններ եւ երկրաչափներ. կարծեք հայերուն համար այդ մասնագիտութիւնները նորութիւն ըլլային...: Իրականութիւնը սակայն ճիշդ հակառակն է. հայերը Փոքր Ասիոյ եւ Անդրկովկասի ամենազարգացած ժողովուրդներն էին:

Ոմանք քարոզչական ֆիլմերու ցուցադրումը պատմական արժեք կը համարեն, դիտել տալով որ անոնք իրենց ժամանակին արդիւնքն են. կարելի է համաձայն ըլլալ անոնց հետ միայն այն պարագային, երբ այդ ֆիլմերը իբրեւ այդպիսին ներկայացուին: DEI (Բազմազանութիւն, հաւասարութիւն եւ ներփակում) շարժումի անդամներէն շատեր կրնան համաձայն չըլլալ ըստածին՝ դիտել տալով, որ քարոզչական ֆիլմերու ցուցադրումը «ցեղային խայծի» արտայայտութիւն մըն է: Գործող երկակի չափանիշները ի վերջոյ կը պարզ են, թէ յառաջադէմ որեւէ հաստատութիւն ո՞ր խումբին պաշտպանութեան կը ձգտի, եւ հակառակը՝ ընդդէմ այդ խումբին, ո՞ր խումբը չարաշահելու արտօնութիւն կը շնորհէ ինքզինքին: Այստեղ անգամ մը եւս կը տեսնենք, որ հայերը ակնյայտօրէն կը պատկանին երկրորդ

Սկզբ՝ էջ 8

խումբին:

Երբ պատկերասփիւռի եւ ռատիոյի թանգարան (ներկայիս կը կոչուի Paley-ի Մետիայի Կեդրոն) աշխատանքի ընդունուեցայ, գլխաւոր համարող Ռոն Սայմընին առաջարկեցի, որ Ժ. Միքայել Յակոբեանի Հայոց Յեղասպանութեան նուիրուած մեծահամբաւ վաւերագրական ֆիլմը՝ «The Armenian Case (Trailer) - YouTube» (Հայկական Հարցը- յայտարարած, Իւթուս) աւելցնէ թանգարանի ծրագիրներու հաւաքածոյին: (MT&R թանգարանի ծրագիրներուն մէջ ներառուելու նախապայմանը այն էր, որ ԱՄՆ



Գողտրիկ պատկեր մը քաղուած՝ «Երկիր Նայիրի» ֆիլմէն:

պատկերասփիւռը եթեր հեռարձակած ըլլար գեթ մէկ հաղորդում անոր մասին, իսկ «Հայկական Հարցը» քանի մը անգամ ցուցադրուած էր PBS կայաններէն: Սայմըն չընդառաջեց առաջարկիս՝ դիտել տալով, որ նշեալ ֆիլմը քաղաքական քարոզչութիւն կը համարէ:

Յանուն Առարկայականութեան պետք է հարց տալ ուրեմն, որ եթէ «Հայկական Հարցը» դիւրիմացաբար քարոզչութիւն կը համարուի համաշխարհային մակարդակ նուաճած նման հաստատութեան մը կողմէ եւ կը մերժուի ներառել զայն այդ ծրագիրին մէջ ու հանրային դիտումի արժանացնել, արդե՞օք երկակի չափանիշներու ակնհայտ չենք ըլլար, երբ այնպիսի քարոզչական ֆիլմեր, ինչպիսիք են «Տունը Հրաբուխի Վրայ»-ն եւ «Երկիր Նայիրի»-ն բացայայտօրէն հանրութեան կը ցուցադրուին համաշխարհային մակարդակ նուաճած մէկ այլ հաստատութեան կողմէ:

Թէեւ այս յօդուածին մէջ ես իրաւացիօրէն կրնամ մեծարել Բեկ Նազարեանի տեսողական պատմութիւն տաղանդը, բայց նաեւ խորապէս վիրաւորական կը համարեմ ֆիլմերուն հակահայկական բովանդակութիւնը: Չիս կ'անհանգստացնէ այն, որ հեղինակին ստեղծագործութիւններուն անդրադարձողները այս ֆիլմերու քարոզչական բնոյթին մասին անաչառ մեկնաբանութիւն չեն կատարած: Ես վրդոված եմ նաեւ այն երեւոյթին ի տես, որ արեւմտեան մշակութային կառոյցները «արդար խաղ» կը համարեն հայոց պատմութեան խեղաթիւրումները որքէն ժամանակ անմահացնելը, յատկապէս, երբ Հայաստան համաշխարհային տերութիւններու օգնութեամբ աշխարհի քարտէզէն անհետանալու ակնյայտ վտանգի տակ կը գտնուի: Ողբերգական է, որ այսօր՝ մէկ դար անց, նոյն տարածաշրջանային եւ համաշխարհային դերակատարները կը ձգտին կազմաքանդել հայկական անկախ պետականութիւնը, քայքայել հայկական ազգայնականութիւնը եւ նոյնիսկ Հայաստանը: Այդ իսկ պատճառով, MoMA-ի համար անյարիր էր ցուցադրել այս ֆիլմերը եւ կը համարձակուի ըսել, որ այս աքտը հանդիսատեսին «Ձիւնաթիւրի» թունաւոր խնձորը իրամտելու համար փորձարկելու է, այլ խօսքով «փափուկ ուժի» պատերազմի վճիռ հայ ժողովուրդին դէմ: Եկէք յիշենք Նիւ Եորքի «Մեթրոպոլիթեն» արուեստի թանգարանի ղեկավարութեան դաւադրական քայլը՝ երբ տապալել կը փորձէր «Հայաստան» 2018 ցուցահանդէսի կազմակերպիչներուն աշխատանքը՝ խուսափելու ցուցահանդէսի պատմական բովանդակութենէն կամ հնագոյն ժամանակներէն Հայաստանի վայելած ինքնիշխանութեան հաստատումէն: Երեւոյթ մը, որ լաւապէս ձեւակերպուած էր փրոֆ. Զլուտ Մուրաֆեանի այս կապով նշուած յօդուածին մէջ:

Հայերը իրենց դարաւոր ու ողբերգական պատմութեան ընթացքին համաշխարհային քաղաքակրթութեան մէջ մեծ անանդ ունեցած են, հետեւաբար ալ ընդհանուր առմամբ սուր կարիք ունեցած են անձնական եւ հաւաքական մակարդակներու վրայ ճանչցուած ըլլալու: Նկատի ունենալով որ ներկայ ժամանակներուն հայերը կը տքնին որպէս ազգ ինքնաբաւ դառնալու, անոնք կը ջանան իրենց պատմական դատը ճանչցուած տեսնել, իսկ իրենց դէմ ուղղուած պատմական սխալները՝ սրբագրուած:

Ահա այս պատճառով է, որ անոնք տագնապներու բովել կ'անցնին, երբ յատկապէս բազմիցս կ'անտեսուին, կը խեղաթիւրուին՝ նոյնիսկ դիտաւորեալ կերպով դուրս կը մնան մարդու իրաւունքներու ժամանակակից, համաշխարհային միջամտութիւններէն, լրատուամիջոցներու արձագանգներէն եւ պատմութեան պաշտօնական տարեգրութենէն: Այս բոլորէն ետք պետք է ըմբռնուով տեսնել, թէ հայերը որքան կը հրճուին, երբ կ'արժանանան արդար ուշադրութեան եւ իրենց պատմութեան, մշակոյթին կը տրամադրուին հանրային հարթակներ, ինչպիսիք են Նիւ Եորքի «Մեթրոպոլիթեն» թանգարանի ծաւալուն ցուցահանդէսը կամ Նիւ Եորքի ժամանակակից Արուեստի Թանգարանի յետահայեաց ֆիլմերու ցուցադրութիւնը:

Բայց երբ հայերը նկատեն, որ այս ցուցահանդէսներու ետին յաճախ կան քաղաքական դրդապատճառներ, որոնք ունին հակաազգային բնոյթ, եւ որ այդ հակահայկական ուղերձները փաստօրէն կը փոխանցուին ոչ միայն հայերուն, այլեւ օտար լայն հասարակութեան, որքանո՞վ պիտի օգտուին այս բոլորէն՝ իրենց նորահաս սերունդներուն հետ մէկտեղ: Մէկ կողմ դնելով մեր սեփական հաստատութիւններուն մշակութային արդիւնքը, միթէ՞ նման առիթներով հայկական մեր մտաւոր բանակին՝ համադրողներու, մանկավարժներու, մտաւորականներու եւ այլոց հետ պետք չէ խորհրդակցել կամ նոյնիսկ գիրքէն գործի մղել: Այդպէս պիտի ընէին բնականաբար այլ ազգեր, որոնք պիտի պահանջէին եւ ստանային նման հարթակներու վրայ «ներկայացման» իրենց բաժինը: Երբ վերադառնանք բազմերանգ ինքնութիւններէ բաղկացած ներկայ յառաջադէմ միջավայրերուն մէջ ինքնութեան պահպանման քաղաքականութեան, արդե՞օք հայերը շրջանցուած պիտի տեսնենք կրկին, թէ՞ այնտեղ պիտի գտնենք նաեւ հայկական կեանքի պահպանման ճիգը: Որպէս լրատուամիջոցներու եւ մշակութային կեանքի երկարամեայ դիտորդ՝ այսօրուան բարձրաշխարհիկ գրականութեան, լրատուական, քարոզչական միջոցներու եւ արուեստի ոլորտներուն մէջ կը տեսնեմ հակահայկական միտում մը, որ կարելի չէ շրջանցել: Այս քաղաքականութիւնը պատահական չէ:

Վերջին տարիներուն, Ատրպէյճան բազմաթիւ հարուածներ ստացաւ շրջակայ եւ արդիւնաբերական միջավայրը ապականելուն, նոյնիսկ հայկական Արցախ ներխուժման օրերուն կենդանի արարածներուն դէմ թունաւոր համարաւոր սպիտակ ֆոսֆորը ապօրինաբար օգտագործելուն համար: Ատրպէյճանի եւ Թուրքիոյ համար անուղղակի լրային իրականացնելու աւելի լաւ միջոց չէր կրնար ըլլալ, քան MoMA-ի ժամբով «Տունը Հրաբուխի Վրայ» ֆիլմին ցուցադրութիւնը: Ֆիլմ, որ քարիւղի ոլորտի հայ ռահ-վիրաները կը ներկայացնէ որպէս շրջակայ միջավայրը ապականողներ եւ վնասարար տարրեր:

Վերադառնալով «Արուեստը այն չէ ինչ որ կը տեսնես, այլ այն՝ ինչ որ ուրիշներուն տեսնել կու տաս» մեքերումին, յիշենք, որ տեսնել տալու միջոցը ուղերձն է, իսկ Բեկ Նազարեան, այնպէս ինչպէս շարք մը տեսագրողներ կամ քարոզիչներ, կը միտեր իր ուղերձներով ձեւաւորել մարդկային որոշակի վարքագիծ: Միտք բանին՝ ֆիլմերը պարզապէս արուեստի օրինակներ կամ պատմողական հարթակներ չեն: Անոնք մանկավարժական գործիքներ են:

Այլ տեղ մը «Կեանքը շատ աւելի կը հետեւի արուեստին, քան արուեստը՝ կեանքին» մեքերումին մասին խորհելով, մարդ պետք է պարզապէս նկատէ ապագային այն քաղաքականութիւնը, որ վարած են խորհրդահայ, ազդեցիկ անթիւ գործիչներ կամ բարձր պաշտօններու տիրացած անձինք՝ ընդհուպ մինչեւ այսօր: «Արժաթեայ պաստառին» վրայ երեւցող վարքագիծերն ու պատկերները իրենց դերը ունեցած են որոշ ոլորտներու մէջ հայու ինքնագիտակցութեան քարտէզէն վանելու հայրենասիրութիւնը, որուն գինը մենք մինչեւ օրս կը վճարենք:

Ինչ կը վերաբերի «Ողջ արուեստը քաղաքական է» մեքերումին... Եկէք պահ մը խորհինք. ինչո՞ւ այս ֆիլմերը, եւ ոչ թէ Արտաւազ Փելեշեանի փորձառական ֆիլմերու վերականգնումները, ինչպէս օրինակ՝ «Տարուան Եղանակները» կամ «Մենք»-ը, որոնք կրնան գեղարուեստականօրէն յառաջատար ըլլալ, միաժամանակ հարազատօրէն պատկերել հայ ժողովուրդի ոգին: Իսկ ինչո՞ւ պատմութեան ճիշդ այս ժամանակահատուածին, երբ Արցախը բռնազրաւուած է, երբ Ատրպէյճան, Թուրքիա եւ Ռուսիա դաւեր կը հիւսեն նուաճելու Հայաստանը, եւ երբ ազգը շուրջ դար մըն է գերեվարուած է միւլտիթիւ թուրք, ատրպէյճանցի, ռուս եւ այլ մակարդակներու կողմէ:

«Տունը Հրաբուխի Վրայ» ֆիլմը արտադրուած է 1928-ին, Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ատրպէյճանի պատկերասրահներու գործակցութեամբ: (Ատրպէյճան ստեղծուած էր ընդամենը 10 տարի առաջ՝ 1918-ին): Խորհրդային համագործակցութեան այս մակարդակը յիշելը կ'ենթադրէ, որ նման համագործակցութիւն անկայ է, կրնայ ըլլալ եւ պետք է տեղի ունենայ այսօր եւս: Այնուամենայնիւ, համաշխարհային վերնախաւերու պահանջած այսօրուան «խաղաղութեան» ձախող նախաձեռնութիւնները կը պարունակեն համարեա՛ն նոյնանման աջակցութիւն ռազմատենչ Ատրպէյճանին: Այն Ատրպէյճանին, որ մտադիր չէ ընդունիլ հայկական պետութիւնը լիակատարօրէն բռնազրաւելու իր ծրագիրէն նուազ պայմաններով համաձայնագիր:

Եթէ դիտած էք այս ֆիլմերը MoMA-ի մէջ (կամ այլուր) եւ ունիք նմանօրինակ մտահոգութիւններ, ձեզ հրաւիրեմ գրելու պարուն ճշդ Սիլվիոն՝ ժամանակակից արուեստի թանգարանի շարժանկարի բաժնի գլխաւոր համադրողին, ինչպէս նաեւ MoMA-ի մէջ անոր գերադաս մարմիններուն՝ 11 W. 53rd Street, New York, NY 10019 USA. Կամ կրնաք գրել MoMA-ի մամուլի գրասենեակին հետեւեալ հասցեով՝ pressoffice@moma.org

Սեղմելէ՛ք «The House on the Volcano 1928» կայքը՝ նշեալ համր ֆիլմը YouTube-ի վրայ դիտելու համար (միջվերնագրերը ռուսերէն են, այս տարբերակին մէջ չկան անգլերէն կամ հայերէն ենթավերնագրեր, երաժշտութիւն): «Երկիր Նայիրի»-ն ժամանակին հասանելի չէր արցախցի հարթակի վրայ:

Լուսին Գասպարեան լրագրող է, հրապարակագիր եւ քաղաքական ծաղրանկարիչ:

**Սևազերէն Թարգմանեց
Չարմիկ Պողիկեան**

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Այս շաբաթ ձեր ամբողջ դիւանագիտութիւնը ի գործ պետք է դնէք, որպէսզի վեճերէն խուսափիք: Ի վերջոյ պիտի յաղթահարէք խնդիրները:



Ցուլ

Նոր մարդոց հետ պիտի ծանօթանաք, որոնք ձեր օգնութեան կարիքը պիտի ունենան: Չրոյցներու ընթացքին մի՛ արհամարհէք զանոնք:



Երկուորեակ

Ձեր անձնական կեանքին մէջ դրական փոփոխութիւններ տեղի պիտի ունենան: Անհրաժեշտ է, որ ստեղծուած իրավիճակին շուտով արձագանգէք:



Խեցգետին

Ձեր հանգիստի ժամերուն ընտանիքի անդամներուն հանդէպ հետաքրքրութիւն ցուցաբերեցէ՛ք: Ձեր առողջութեան ալ հոգ տարէ՛ք:



Առիծ

Ձեր բոլոր խնդիրներն ալ կարելի է լուծել: Ճիշդ է, որ անձնական կեանքին մէջ խոչընդոտներու կը հանդիպիք, սակայն պիտի կարենաք յաղթահարել զանոնք:



Կոյս

Անհրաժեշտ է, որ պատասխանատուութիւն ստանձնելու պատրաստակամութիւնը ունենաք եւ դուք անձամբ լուծէք ձեր հարցերը:



Կշիռք

Ձեր ապրած փորձառութիւններուն հիման վրայ ուշադրութեամբ վերլուծեցէ՛ք դէպքերը: Ձեր բոլոր ծրագիրները շուտով պիտի իրականացնէք:



Կարիճ

Այս շաբաթ դրական եւ յաջող պիտի ըլլայ ձեզի համար: Նորանոր հանդիպումներ եւ ճամբորդութիւններ պիտի ունենաք եւ մեծ շահ ապահովէք:



Աղեղնաւոր

Հանգիստի եւ ժամանցի համար հիանալի շաբաթ է: Վեճերէն հեռու մնացէ՛ք, որպէսզի երջանիկ ըլլաք:



Այծեղջիւր

Աշխատանքի մէջ աննշան խընդիրներ պիտի դիմագրաւէք, որոնք պիտի անհանգստացնեն ձեզ: Բնութեան մէջ հաճելի պահեր պիտի ունենաք:



Ձրիս

Հին բարեկամներու աջակցութիւնը պիտի վայելէք եւ հոգեպէս խաղաղիք: Երկար ատենէ ի վեր սպասուած լուր մը պիտի խանդավառէ ձեզ:



Ձուկ

Ձեր խնդիրները առանձին պիտի չկարենաք լուծել: Լաւ յարաբերութիւններ մշակեցէ՛ք ձեր շուրջիներուն հետ, որպէսզի չխուսափախէք:



ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ՈՒՏԵԼ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԸՆԹԱՑՔԻՆ...

Սնունդի օգտագործման տեսանկիւնէն պահեցողութեան տարբեր աստիճաններ ու մօտեցումներ կան, որոնց ընտրութիւնն ու պահպանումը կախուած են պահեցողի կամքին ուժէն, ֆիզիքական ու առողջական վիճակէն եւ պահքի հանդէպ ունեցած լրջութեան աստիճանէն:

Մեծ Պահք



Եւ վերջիններս կենդանական ծագում չունին: Աւելցնենք, սակայն, որ մեղրի կիրառութիւնը պահք պահողներուն համար թոյլատրելի է, ինչպէս թոյլատրելի է բուսական կաթի օգտագործումը ըստ անհրաժեշտութեան:


Այս բոլորով հանդերձ, սննդային ընտրութիւններէն աւելի մեծ կարեւորութիւն ունի ոխի, քիմիանոսութեան, բամբասանքի վանումը, որովհետեւ ինչպէս Յիսուս կ'ըսէ. «Լսեցէ՛ք եւ իմացէ՛ք. ոչ թէ՛ ինչ որ բերնէն կը մղտնէ կը պղծէ մարդը, այլ ինչ որ բերնէն կ'ելլէ՛՜ ա՛յն է որ կը պղծէ զայն» (Մտ 15. 10):

ԺԱՄԱՆՅ

ԿԱՐՃ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ, ՈՐ ԿԸ ԲՆՈՒԹԱԳՐԷ ՁԵՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ընտրեցէ՛ք ձեր նախասիրած եռանկիւնը...

Այս կարճ հարցաւորանքը կ'օգնէ բացայայտելու ձեր բնատրութեան կարեւոր գիծերը: Կարդացէ՛ք զայն եւ պարզեցէ՛ք ձեր նկարագիրը: Նայեցէ՛ք ստորեւ ներկայացուած նկարին եւ ընտրեցէ՛ք եռանկիւն մը: Այնուհետեւ կարդացէ՛ք, թէ ի՛նչ կը նշանակէ ձեր ընտրութիւնը:



Հարցաւորանքի արդիւնքներ. Եռանկիւն թիւ 1:

Դուք յաւակնոտ անձնաւորութիւն էք, համարձակ, ուժեղ, պատրաստ պայքարելու ձեր գաղափարներուն եւ իղծերուն համար:

Կեանքի մէջ ձեզի համար ամենակարեւորը նպատակն է, որուն կ'ուղղուին ընդհանրապէս ձեր աշխատանքները: Ձեր իղծերը, նպատակները կը խրախուսեն ձեզ լիովին ապրելու իւրաքանչիւր օր եւ քայլ առ քայլ յառաջանալու:

Եթէ կեդրոնացած էք ձեր նպատակին վրայ, կեանքի մէջ ամեն ծրագիր կ'ընթանայ իր բնական հունով:

Եռանկիւն թիւ 2:

Ձեր ընկերները ձեր ամենամեծ արժէքն են: Ձեզի համար իսկական բարեկամութիւնը կատարել կեանքի իմաստն է: Ընկերներն ու սիրելիները ձեզի համար շատ բան կը նշանակեն: Եթէ անոնք հարցեր ունենան, ամեն ինչ կ'ընէք, ժամանակ եւ ճիգ կը տրամադրէք անոնց օգնելու համար:

Միշտ այնտեղ էք, ուր բարեկամ մը դժուարութիւններ ունի եւ օգնութեան կարիք, իսկ դուք պատրաստ էք օգնելու անոր:

Երբեք չէք մեղադրէր ձեր ընկերները իրենց սխալներուն համար: Ի վերջոյ, դուք միշտ ալ կ'օգնէք անոնց, նոյնիսկ եթէ սխալած ըլլան: Դժուար ժամանակներու մէջ դուք առաջինն էք, որ օգնութեան ձեռք կը մեկնէք անոնց:

Եռանկիւն թիւ 3:

Ինքնատիրապետումի առկայութիւնը ձեր առանձնայատկութիւնն է: Ձեր միտքը միշտ

կը գերակշռէ ձեր սրտին: Դուք այլազան վիճակներու մէջ զանազան որոշումներ կը գոյացնէք, քանի որ կ'առաջնորդուիք ձեր միտքով եւ կ'ապաւիւնիք միայն դուք ձեզի: Այդ պատճառով ալ հիասթափութիւն չէք ապրիր:

Դուք կը կառավարէք ձեր կեանքը եւ թոյլ չէք տար որեւէ մէկուն միջամտելու ձեր կեանքին եւ ձեզի թելադրանքներ տալու: Կը փորձէք մարդոց որոշ հեռաւորութեան վրայ պահել: Եւ եթէ որեւէ մէկը ձեր բարեկամութիւնը փնտռէ, ստիպուած կ'ըլլայ անցնելու բազմամակարդակ քննութենէ:

Եռանկիւն թիւ 4:

Ձեր հիմնական առաւելութիւնները ազնուութիւնն ու պարկեշտութիւնն են:

Դուք բաց միտքով, հոգատար եւ աներեւակայելիօրէն ազնիւ անձնաւորութիւն էք եւ նոյնը կ'ակնկալէք ուրիշներէն: Ձեր պարզութիւնն ու անկեղծութիւնը մարդոց ուշադրութիւնը կը գրաւեն: Ահա թէ ինչո՞ւ կը համարուիք լաւատես եւ կեանքը սիրող անձնաւորութիւն:

Ձեր գաղափարներն ու բարեսիրական մարդկերու մէջ ծառայելու մարդկային յատկանիշը մեծապէս կը գնահատուին ձեր շրջապատին կողմէ:

Եռանկիւն թիւ 5:

Դուք կարելիութիւն եւ ուժ ունիք յաղթահարելու կեանքի դժուարութիւնները՝ առանց որեւէ ջանք գործադրելու:

Քրտնաջան կ'աշխատիք յաջողութիւններու հասնելու համար: Ծայրաստիճան անկախ եւ ինքնաբաւ անձնաւորութիւն էք, որ օրինակ կը ծառայէ շատերուն: Հոգեկան բարոյթներ չունիք, որովհետեւ առողջ մտածելու հակուած էք, առանց դուք ձեզ այլոց հետ համեմատելու հիւանդագին սովորութեան:

Մարզական



Ռաֆֆի Սիկատեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՆՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Ասիոյ պասքեթի ախոյեանութեան գտման մրցումներու առաջին փուլին, Սուրիոյ պասքեթի տղոց հաւաքականը Դամասկոսի մէջ 78 - 87 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Լիբանանի խումբին դէմ մրցումին:

-Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան 14-րդ փուլի մրցումներու շրջագիծին մէջ, Յալէպի Աիլին յաջողեցաւ 2-1 արդիւնքով պարտութեան մատնել հիւրընկալ Ուահտէն: Նոյն արդիւնքով Յուրիէն զիջեցաւ Լաթաքիոյ Թըշրիսին: 1-0 արդիւնքով Յըթթինը յաղթեց Զարամէին, իսկ ճապլէն՝ Թալիային: Միակ հաւասար արդիւնքով աւարտած հանդիպումը եղաւ Ճէշ Ուասսէ մրցումը՝ 1-1 արդիւնքով:



-Արեւմտեան Ասիոյ աղջկանց ֆութպոլի մրցումներուն, Սուրիոյ աղջկանց հաւաքականը 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Իրաքը:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՔԵԹԻ ՀԱՄԱՔԱՎԱՆԸ ՅԱՂԹԵՑ ԱԼՊԱՆԻՈՅ ԽՈՒՄԲԻՆ

Կիրակի օր պասքեթի աշխարհի 2027 թուականի առաջնութեան նախընտրական առաջին փուլի մրցումներուն, Հայաստանի ազգային հաւաքականը երկրորդ հանդիպումը կատարեց՝ մրցելով Ալպանիոյ հաւաքականին հետ: Հայաստանի պասքեթի հաւաքականը երեւանի մէջ 84-79 արդիւնքով յաղթեց Ալպանիոյ հաւաքականին: Հանդիպումի ամենաարդիւնաւետ խաղացողը դարձաւ Հայաստանի հաւաքականի ներկայացուցիչ Անտրէ Սպայթ Մկրտչեանը՝ նշանակելով 17 կէտ: Հայաստանի հաւաքականը առաջին հանդիպումին 106 - 91 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Աւստրիոյ կազմէն:



Կիրակի օր պասքեթի աշխարհի 2027 թուականի առաջնութեան նախընտրական առաջին փուլի մրցումներուն, Հայաստանի ազգային հաւաքականը երկրորդ հանդիպումը կատարեց՝ մրցելով Ալպանիոյ հաւաքականին հետ: Հայաստանի պասքեթի հաւաքականը երեւանի մէջ 84-79 արդիւնքով յաղթեց Ալպանիոյ հաւաքականին: Հանդիպումի ամենաարդիւնաւետ խաղացողը դարձաւ Հայաստանի հաւաքականի ներկայացուցիչ Անտրէ Սպայթ Մկրտչեանը՝ նշանակելով 17 կէտ: Հայաստանի հաւաքականը առաջին հանդիպումին 106 - 91 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Աւստրիոյ կազմէն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԼԻԿԵՐՓՈՒԼ ԴԱՐՁԱՒ ԱՆԳԼԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ

Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին մէջ տեղի ունեցած եզրափակիչ մրցումին, գերմանացի Իւրկէն Զլոպի գլխավորած խումբը 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Լոնտոնի Չելսին: Հիմնական ժամանակը աւարտեցաւ 0 - 0 հաւասարութեամբ: Առաջին կիսախաղին, Չելսիի անգլիացի յարձակող Ռահիմ Ստերլինկ կրցաւ ցնցել մրցակիցին դարպասը, սակայն իրաւարարը VAR-ին դիմելով չեղեալ նկատեց կողմ: Չոյզ խումբերը յաւելեալ ժամանակաշրջանի խաղարկութեան դիմելով շարունակեցին իրենց յարձակումները: Լիվըրպոլի խաղացող Վան Տայթ 118-րդ վայրկեանին յաջողեցաւ նշանակել յաղթանակի կողմ եւ տիտղոսը նուիրել Լիվըրպոլին:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 477)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■								
2		■			■						■	■
3						■				■		
4				■								
5		■						■				
6				■				■			■	■
7		■					■					■
8	■											
9			■								■	
10						■		■				■
11				■								
12								■				■

Հորիզոնական

- Աչքերը յառած՝ սեւեռած: Արցախի շրջաններէն:
- Տարի: Ձայնանիշ: Միայն:
- Երկար: Հակառակ՝ շաղկապ: Ձայնաւոր տառեր:
- Քաջ: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Հետաքրքրուելու կարողութիւն:
- Կոկորդի մուտքի գեղծ: Հակառակ՝ աղբիւր:
- Կողոպուտ: Դաշտ:
- 5500: Անձնական դերանուն:
- Եական բայ: Պատկառիչ:
- Լեզուով մը՝ այո: Թռչունի տեսակ:
- Առարկայ: Իրերայաջորդ տառեր: Քէն:
- Տառի մը անունը: Չեփիւմ: Գէթ:
- Խարագանել:

Ուղղահայեաց

- Իշխանական ժառանգորդ գաւակ: Տեխ:
- Սուրիոյ Մասքանէ քաղաքին մօտ գտնուող հնագիտական վայր: Բիծ:
- Մզկիթի աշտարակ: Իրերայաջորդ տառեր:
- Ձայնանիշ: Տերեւներու խշրտոց:
- Լիբանանը խորհրդանշող մշտադալար ծառ: Խարտեայ:
- Հակառակ՝ պնդագլուխ: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
- Բաղաձայն տառեր: Բնականոն չընթանալ:
- Հոգիի չարչարանք:
- Թշնամի: Կրկնուած ձայնաւորներ:
- 7060: Հակառակ՝ արձակել:
- Գրական ստեղծագործութիւն: Ձայնանիշ: Մտածում:
- Մատչելի գին: Լեցուն:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 476)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	բ	գ	դ	ե	զ	է	թ	ւ	ա	ն	ձ
2	մ	ա	մ	ի	բ	հ	ա	կ	ի			
3	ա	ի	ա	մ	ա	զ	ն	ն				
4	բ	ր	ա	ն	ա	տ	ր	ն	ւ	կ		
5	ա	տ	ի	կ	ւ			ա	դ	ի		
6	ա	ա	ա	ա	ա	յ	լ			ա		
7	ա	ն			կ	բ	է	հ	ա			
8	զ	ն	ւ	բ	զ	է	ն	ջ	լ	ա	տ	
9	է	մ	ւ	ի	է	ա	ն	յ				
10	բ	խ	ն	ն	ա	ր	հ	ն	է	բ	ր	
11	ա	բ	ա		ն		ւ	է				
12	ն	է	բ	կ	ա	յ		ա	դ	ա	ն	դ

ԼՈՒՐԻՆՍ

Երկուշաբթի 4/3



7° 18°

Երեքշաբթի 5/3



7° 18°

Չորեքշաբթի 6/3



7° 18°

Հինգշաբթի 7/3



8° 16°

Ուրբաթ 8/3



7° 15°

Շաբաթ 9/3



6° 15°

Կիրակի 10/3



6° 18°

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ...

Մկրտչի Էջ 1

Ունի մեր ժողովրդի արտասահմանյան հայրերը, իր բացման խօսքին մեջ հայրական սիրով և աստուածային օրհնությամբ ողջունել է տեղ ժողովականներն ու ներկաները, փառք է գոհությամբ յայտնեց Աստուծոյ, որ հակառակ անցնող տագնապալի, հոգեցունց և դժուարակիր երկամեակին, թեմի ազգային մեքենան գործեց ամենայն պատրաստակամութեամբ, զոհողութեամբ, ուժերու լարումով և մանաւանդ հաւատարմութեամբ: Գիտնալով, որ տակաւին սեւ, մութ ամպերը չեն փարատած և դժուարութիւններն ու ամէնօրեայ մարտահրաւերները կը յամենան, առաւել պատրաստակամութեան գիտակցութեամբ, նուիրումի ու զոհողութեան ոգիով գործելու եւ ծառայելու կը հրահրուին: Ուստի, սրբազան հայրը յիշեցուց, որ հաւաքուած ենք Ազգ. Երեսփոխանական ժողովի 174-րդ նիստը գումարելու եւ քննելու Ազգ. Վարչութեան եւ Ազգ. Կրօնական ժողովին աշխատանքները, որմէ ետք պիտի ընտրենք նաեւ յառաջիկայ երկամեակի նոր Ազգ. Վարչութիւնն ու Ազգ. Կրօնական ժողովը: Սրբազան հայրը ժողովականներուն եւ ներկաներուն մաղթեց մտքի լուսաւորում, համբերութիւն, երկայնամտութիւն եւ յաջողութիւն, ինչպէս նաեւ պատկառելի ժողովին ալ հեզասահ ընթացք եւ արդիւնաբեր ու օգտաշատ աւարտ: Իր խօսքի աւարտին, սրբազան հայրը հրահրեց Զոհ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեանը ընթերցելու ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեան եւ քաջալերանքի խօսքը, որ յատուկ կերպով, սրբազան հոր խնդրանքին ընդառաջելով ուղղած էր ժողովին:

Յետ Ազգային Վարչութեան եւ Կրօնական ժողովի տեղեկագրերու ընթերցման, շինիչ քննարկումներ կատարուեցան, գնահատական արձանագրուեցաւ եւ ժողովականներուն կողմէ ներկայացուեցան առաջարկներ, որոնք ժողովին կողմէ որդեգրուեցան յօգուտ թեմի առաւել բարգաւաճման:

Ժողովի աւարտին, տեղի ունեցաւ թեմի Գործադիր Իշխանութեան երկու նոր կազմերուն ընտրութիւնը, հետեւեալ մանրամասնութեամբ.

- Ազգային Կրօնական ժողովի կազմ՝
- Յոգ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան
 - Յոգ. Ս. Արմէն Արդ. Գալաճեան
 - Արժ. Ս. Մաշտոց Ա. Զինյ. Արապաթեան
 - Արժ. Ս. Արշակ Ա. Զինյ. Ալաճաճեան
 - Արժ. Ս. Նարեկ Ա. Զինյ. Չերեցեան
 - Արժ. Ս. Չարեհ Զինյ. Շաքարեան
 - Արժ. Ս. Գանիկ Զինյ. Չափանեան
 - Ազգ. Վարչութեան կազմ՝
 - Տիար Ժիրայր Բեխեան
 - Երկրչփ. Մարալ Գալայճեան
 - Սեմերճեան
 - Տիար Արմէն Գասպարեան

Մեթր Նորա Գրաճեան
Տիար Յարութ Զամիչեան
Տիար Վաչէ Ծուհարեան
Տիար Ժագ Գազեգեան
Ընտրուեցաւ նաեւ Ազգ. Երեսփոխանական ժողովի նոր դիւանը՝ Մեթր Սունայուլ Սունայուլեան (Ատենապետ)

Տիար Հայկազ Ասատուրեան (Ատենապետ)

Արժ. Ս. Վազգէն Ա. Զինյ Զեօշկերեան (Ատենապետ)

Օրդ. Մակի Պերպերեան (Ատենապետ)

Նիստի աւարտին, առաջնորդ սրբազան հայրը իր սրտի խօսքը ուղղեց: Ան դիտել տուաւ, որ անցնող երկամեակին, սուրիափայլութեան եւ մեր թեմական գործունեութեան համար տարածաշրջանի եւ մանաւանդ երկրի քաղաքական, տնտեսական եւ ընկերային տիրող իրավիճակը ծանր պայմաններ ստեղծեցին, որոնց մէջ ազգային մարմինները գործեցին պատասխանատուութեամբ, նուիրումով եւ յանձնառութեամբ: Անտեսակայելի զոհողութիւն, ճիգ ու ջանք եւ աշխատանք ի գործ դրուեցաւ զանազան տարածքներու վրայ, հասնելու համար մեր ժողովուրդի պետքերուն եւ գոհացնելու համար անոնց կարիքները: Այս նուիրական աշխատանքը կատարեցինք Աստուծոյ օրհնութեամբ եւ մանաւանդ համայնական ճիգերով եւ առաւել մեզի նեցուկ եղող եւ նիւթաբարոյապետ օժանդակող բարերարներուն, կառոյցներուն, բարեսիրական կազմակերպութիւններուն եւ մարդասիրական հաստատութիւններուն, ինչպէս նաեւ շատ սղ անհատ թէ այլ պարագաներու:

Սրբազան հայրը, թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին անունով երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, որ շարունակ իր հայրական հոգատարութեան առարկան դարձուց մեր թեմը, գործնականօրէն արտայայտելով իր աջակցութիւնը, երբ անձամբ ներկայ գտնուեցաւ եւ այցելեց իր ժողովուրդի գաւազներուն, անոնց հետ եղաւ, քարոզեց, աղօթեց, քաջալերեց ու զօրակցեցաւ, ինչպէս նաեւ յատուկ կոչեր ուղղեց, որոնց ընդառաջելով կարգ մը թեմեր իրենք ալ իրենց օգտաւետ ներդրումը բերին:

Սրբազան հայրը յատկապէս շնորհակալութիւն յայտնեց շրջանաւարտ Ազգային Կրօնական ժողովին, նաեւ Ազգային Վարչութեան, իր յարակից խորհուրդներով եւ յանձնախումբերով, եւ գնահատեց բոլորին ծառայութիւնը, յատկապէս մահասարսուռ, կործանարար եւ քանդիչ երկրաշարժի ժամանակամիջոցին եւ անկէ ետք երկարող ամբողջ տարուան ընթացքին, երբ նախանձախնդրութեամբ եւ նուիրումով ի գործ դրին իրենց վստահուած պատասխանատուութիւնը:

Սրբազան հայրը նորընտիր Ազգ. Կրօնական ժողովին եւ Ազգ. Վարչութեան յաջողութիւն մաղթեց՝ եկեղեցանուէր ծառայութեան եւ յօգուտ մեր ժողովուրդին իրենց կատարուեցաւ մարդասիրական առաքելութեան խումբի անցեալի աշխատանքներուն:

14-րդ խումբի գնդապետը Սըրբազան Հօր նուիրեց Տաթևի վանքը պատկերող ձեռակերտ յուշանուէր մը:

Ան բարձր գնահատեց նաեւ Ազգ. Երեսփոխանական ժողովի դիւանը եւ նիստին մասնակցող հոգեւորական եւ աշխարհական երեսփոխանները, մաղթելով, որ Աստուած օրհնէ մեզ բոլորս, իր հովակիին տակ ապահով պահէ, իր աստուածային շնորհքով ու իմաստութեամբ լիացնէ եւ իր Ս. Հոգիով առաջնորդէ մեր մտածումները, քաջլերն ու աշխատանքները, որպէսզի անոնք բոլորը ըլլան ու ծառայեն Աստուծոյ փառքին, մեր հայրենիքին՝ Յայաստանին ու ծննդավայրին՝ Սուրիոյ հզօրացման ու բարգաւաճման եւ մեր թեմին ու ժողովուրդին վերականգնումին, յաջողութեան եւ բարօրութեան համար:

Նիստը փակուեցաւ առաջնորդ սրբազան հոր «Պահպանիչ» աղօթքով:

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՄԲ...

Մկրտչի Էջ 1

Քելութեան 14-րդ խումբի հրամանատար Դաւիթ Յարութեանեանին կողմէ:

Պատուիրակութեան մաս կը կազմէին ճեղքի Կառավարչական Փոխանորդ Յոգ. Ս. Լեւոն Վրդ. Եղիայեան, Յոգ. Ս. Արմէն Արդ. Գալաճեան, Ազգ. Վարչութեան ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեան, Ազգ. Վարչութեան անդամ տիար Մանո Տեր Մանուելեան եւ Յարաբերական յանձնախումբի անդամ տիար Յարութ Յայրապետեան:

Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, անդրադարձ կատարուեցաւ մարդասիրական առաքելութեան խումբին մատուցած ակնազերծման ծառայութիւններուն:

Սրբազան Հայրը իր հայրական օրհնութիւնները փոխանցելով աղօթեց, գօտեպնդեց գիւնորները եւ անփորձանք ծառայութիւն մաղթեց անոնց, ինչպէս նաեւ լաւագոյնը մաղթեց մեր հայրենիքին, բանակին եւ զօրավարներուն:

Այցելութեան առիթով, ան Կրօնական ժողովին հրատարակած «Հաւատով Խոստովանիմ» գիրքը եւ աղօթքի բացիկներ նուիրեց գիւնորներուն:

Այնուհետեւ, սիրոյ սեղանի շուրջ համախմբուելով անդրադարձ

կատարուեցաւ մարդասիրական առաքելութեան խումբի անցեալի աշխատանքներուն:

14-րդ խումբի գնդապետը Սըրբազան Հօր նուիրեց Տաթևի վանքը պատկերող ձեռակերտ յուշանուէր մը:

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ...

Մկրտչի Էջ 1

Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, մտածումներու փոխանակում կատարուեցաւ եւ բերիոյ Հայոց Թեմ-Հիւպատոսութիւն սերտ յարաբերութեան մասին անդրադարձ կատարուեցաւ: Պարոն Հիւպատոսը Սուրիոյ մէջ ՀՀ Դեսպան մեծարգոյ Տիգրան Գեորգեանին բարեմաղթութիւնները փոխանցեց սրբազան հոր եւ ազգային իշխանութեան:

Սրբազան հայրը, իր հայրական օրհնութիւնները փոխանցելով, յաջողութիւն մաղթեց Հիւպատոսութեան գործունեութիւններուն: Այցելութեան առիթով, ան Կրօնական ժողովին հրատարակած «Հաւատով Խոստովանիմ» գիրքը նուիրեց պարոն Հիւպատոսին:

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԸՆԴՈՒՆԵՑ...

Մկրտչի Էջ 1

Եանի եւ Լաթաքիոյ ազգային երեսփոխան եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան ատենադպիր Աւետիս Կարպուշեանի, որոնք Հալէպ ժամանած են մասնակցելու Ազգ. Երեսփոխանական ժողովին:

Սրբազան հայրը, իր հայրական օրհնութիւնները փոխանցեց այցելուներուն, գնահատեց անոնց ազգանուէր ծառայութիւնը եւ կատարեալ յաջողութիւն մաղթեց իրենց յառաջիկայ գործունեութիւններուն:

ՃԵՂԻՐԷՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ...

Մկրտչի Էջ 1

Յին երեսփոխան Արմէն Նալպաստեանը եւ Գամիշլիէն ժամանած երիտասարդներ:

Սրբազան Հայրը, իր հայրական յորդորները փոխանցեց այցելուներուն, օրհնեց եւ գնահատեց ճեղքի շրջանէն ներս անոնց մատուցած ազգանուէր ծառայութիւնը եւ կատարեալ յաջողութիւն մաղթեց:

